

ԽԱՐԲԵՐԴ՝ ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ «ՍՊԱՆԴԱՆՈՑ ՆԱՀԱՆԳԸ»

ԼԵՒՈՆ ՎԱՐԴԱՆ

Տասնչորս Դեկտեմբեր 1922-ին Լոզանի մէջ կայացող Ռազմերկրային Յանձնաժողովի տասնհինգերորդ նիստին որ նուիրուած էր Հայ-թուրք յարաբերութիւններու քննարկումին՝ Պաղատութեան ժողովի Միացեալ Թուրք Պարտուիրակութեան պետ Իսմեթ Ինէօնիւն առանց խպնելու կը յայտարարէր յատենի ժողովոյ թէ թուրքերուն ձեռքերը որոնք զբաղած էին աշխատանքով օտար ներխուժումէ քանդուած ու քայքայուած իրենց սեփական երկիրէն ներս՝ ամենէն մաքուր ձեռքերն էին, թէ անոնք բռնութիւն չէին գործած բնաւ, թէ երբեք ներխուժած չէին ուրիշներու հող Հայրենիէն ներս եւ սահմաններէն, եւ առ այդ ալ՝ բնաւ չէին վախնար ուրիշներու ձեռքերուն հետ բազդատութեան դրուելէ⁽¹⁾: Այն ատեն ժողովասրահէն ներս գուցէ գտնուեցան քանի մը հոգի, որոնք կասկածով, եւ թերեւս ալ խեթ նայեցան Իսմեթ Ինէօնիւյի քիւրտի լայնարաց աչքերուն եւ ըսին ոչինչ, շատ հաւանաբար չուզեցին ալ ըսել որեւէ բան՝ լուսալէս գիտնալով որ Ինէօնիւն կը ստէր պարզօրէն, թէ իրենք պարտաւոր էին ընդունելու թուրք զինուորական-քաղաքագէտին յայտարարութիւնը, որովհետեւ ա՛լ ուժ չունէին կռուելու, խեղճացեր էին անիմանալի կերպով, եւ մանաւանդ գիտէին, խորապէս գիտէին, թէ թուրքին հետ դիւանագիտական ի՞նչ ազտոտ խաղ կը խաղար իւրաքանչիւրն իրենցմէ: Եւ այն ատեն, ժողովասրահէն ներս տեղ մը, սեղանի մը առջեւ նստած եւ գանազան ազգերու պատկանող պաշտօնական սղագրողներ արձանագրեցին արտայայտուածն որպէս անբեկանելի հաստատում ներկային համար ու վաղուան, եւ զայն հրիտակեցին դալիք պատմաբաններուն՝ որպէս վկայութիւն եւ փաստագիր:

Իրա՛ւ ալ՝ ո՛չ մէկը փորձեց հերքել յայտարարուածն այն ատեն, որ խեղաթիւրումն էր ու նենգափոխումը ճշմարտութեան եւ պատմութեան արձանագրած իրականութիւններուն: Կար ամբողջ աշխարհ մը արիւնի եւ արցունքի, ջարդի ու կոտորածի, առեւանգումի եւ յա-

փրչտակութեան, քայքայումի եւ աւերածութեան, եւ ոչնչացումի ու բնաջնջումի, որուն ճակատին խարանուած կը մնար պիտակը Օսմանեան կայսրութեան: Այն ատեն տակաւին կեանքի չէր կոչուած «ցեղասպանութիւն» եզրը: Սակայն նիստին ներկայ եղող քիչ մը ամէն մարդ գիտէր քաշն ու կշիռը կատարուած յայտարարութեան, եւ իսկական ծանրութիւնը անով հերքուող ճշմարտութեան: Սակայն անոնցմէ ո՛չ ոք փորձեց հակադարձել, ո՛չ այդ օր եւ ոչ ալ անկէ ետք: Իրականութեան մէջ՝ Հայկական Տասնհինգին եւ անոր յաջորդող տարիներուն վտճած հայու, յոյնի, ասորիի, քաղզէացիի եւ արաբի արիւնը չէր իսկ չորցած ձեռքերուն վրան Ինէօնիւլին, թուրք իր բարեկամներուն եւ քիւրտ իր արեւնակիցներուն: Օսմանեան Աշխարհը խեղզամահ էր եղած յորձանքովը ոչ-թուրք արիւնին, ու կար բնական կամ գերբնական ոչ մէկ ուժ որ կարենար լուալ ու մաքրել անոր ձեռքերը՝ թանձրացող մածուկէն այդ արիւնին:

Միամիտ ըլլալու է հաւատալու համար վերջին սա հաստատումին: Այսօր, ինչպէս երէկ, Միջին Արեւելքի պատմութեամբ զբաղող ո՛րեւէ ուսանող աւելի՛ քան վստահ է անհեթեթութեանը Ինէօնիւլի յայտարարութեան եւ սմսեղուկ խաղին քաղաքագէտներուն, որոնք տակաւին երէկ, եւ, ինչո՞ւ չէ, նո՛յնիսկ այդ պահուն երբ իրենք նստեր էին ժողովի Ինէօնիւլի հետ՝ ստացեր էին, եւ կը ստանային ալ, թուրքին թրքութիւնը վկայագրող թուղթերն ու տեղեկագիրներն իրենց դիւանագիտական, կրօնական, կրթական եւ առողջապահական ներկայացուցիչներուն, որոնց յղած թուղթերը արդէն իսկ կազմեր էին, ու կը կազմէին տակաւին, լեռնակուտակ բարձրացող դէզերը արխիւային նիւթերուն: Այժմ Հայոց Պատմութեան վերջին մէկ-դարեայ շրջանով հետաքրքրուող կայ ո՛չ մէկ ուսանող, որ չգիտնայ առկայութիւնը ժամանակի փոշիին ներքեւ հեծող արխիւային այս նիւթերուն, որոնցմէ ոմանք կա՛մ կը փճացուին⁽²⁾ կամ ալ կը վաճառուին որպէս հին թուղթ⁽³⁾:

Ի՛նչ որ ալ ըլլայ իրականութիւնը զանազան դիւանատուներու մէջ գոյութիւն ունեցող արխիւային նիւթերու մասին՝ թուղթերու բարձրացող դէզերուն վրան եկաւ աւելնալու 9 Փետրուար 1918 թրւակիր ընդարձակ տեղեկագիր մը եւս, որ կը կրէր ստորագրութիւնը Պարբերդի հիւպատոսական շրջանի ամերիկեան հիւպատոս Լեսլի Ամմերթըն Տէյվիսի, եւ զոր, հիւպատոսական այլ նիւթերու հետ, 1989-ին լոյսին տուաւ Սուզան Ք. Պլէռը՝ իր գրիչին պատկանող ընդարձակ յառաջարանով մը⁽⁴⁾: Հիւպատոս Տէյվիսն իր պաշտօնատեղին՝ Մեզիթէ հասաւ 31 Մայիս 1914-ին եւ հոն մնաց մինչեւ որ Լուզիթանիոյ դէպքէն ետք, 6 Ապրիլ 1917-ին, Ամերիկայի Միացեալ Նահանգներու իշխանութիւնները պատերազմ յայտարարեցին նախ՝

Գերմանական եւ ապա՝ Աւստրո-Հունգարական եւ Օսմանեան Կայսրութիւններուն դէմ, որոնց որպէս հետեւանք՝ Տէյվիսն ստիպուեցաւ ձգելու իր պաշտօնատեղին 16 Մայիս 1917-ին:

Ըստ հիւպատոս Տէյվիսի՝ շատ էր ընդարձակ Խարբերդի հիւպատոսական շրջանը եւ կ'ընդգրկէր Տիգրանակերտի սահմաններէն մինչեւ Կովկասի փեշերն ինկող հողամասը: Բոլոր այս տարածութիւնը որ կը պարունակէր ամբողջ Արեւմտեան Հայաստանը՝ ունէր լոկ քանի մը օտար ներկայացուցիչներ: Տէյվիսի համար մերձաւորագոյն հիւպատոսարանները կը գտնուէին Տիգրանակերտի մէջ՝ ուր կար անգլիական հիւպատոս մը, եւ Կարինի մէջ՝ ուր կը գտնուէր գերմանական հիւպատոսարան մը: Ամերիկեան մօտակայ հիւպատոսարաններ էին Հալէպինը եւ Տրապիզոնինը⁽⁵⁾: Այս բոլորն իրեն համար կը նշանակէր բացարձակ մեկուսացում՝ մանաւանդ 1914-ի երթեւեկի պայմաններուն տակ եւ սահմաններէն ներս Օսմանեան Կայսրութեան, ուր կը պակսէր նուազագոյն չափով իսկ ընդունելի ու գործածելի ցանց մը ճամբաներու եւ երթեւեկի տանելի ապահովութիւն:

Տէյվիսի համաձայն՝ Խարբերդի նահանգն ունէր մօտ կէս միլիոն բնակչութիւն, որուն հայեր էին գրեթէ հարիւր յիսուն հազարը: Խարբերդ քաղաքն ունէր երեսուն հազար բնակիչ եւ իշխող դիրք մը Խարբերդի դաշտին վրայ: Մահմետական էր մեծամասնութիւնն այս բնակչութեան, սակայն դաշտի հարիւրէ աւելի զիւղերուն կէսէն աւելին կը պատկանէր հայերուն⁽⁶⁾: Այժմ, կը հաստատէր Տէյվիսն իր Ծ Փետրուարի ընդարձակ տեղեկագիրով, «այս գիւղերուն գրեթէ բոլորն ալ աւերակ են... եւ անոնց բնակիչները՝ մեկնած»⁽⁷⁾:

Իրա՞ւ մեկնած՝ թէ ոչ բունի տեղահանուած՝ պիտի հարց տար անկողմնակալ ուսանողը Հայոց Պատմութեան վերջին մէկդարեայ ժամանակահատուածին: Աւելին՝ պիտի հարց տար տակաւին, թէ ինչո՞ւ էին աւերուած հայուն այս գիւղերը, ի՞նչ էր պատահած հայուն դաշտ ու արօտին, եւ դպրոց ու եկեղեցիին... Ո՞վ պիտի պատասխանէ այս հարցումներուն, որոնց ո՛չ իսկ մէկ անգամ փորձեց պատասխանել եւ եթէ ոչ ճշմարիտ՝ գէթ ճշմարտանման պատասխան մը ձեւակերպել Հայկական Տասնչինգէն ետք իրարայայջորդ որեւէ թուրք իշխանութիւն: Ըստ մինչեւ հիմա տրուած օսմանեան թէ թրքական բացատրութիւններուն՝ հայերը կային երէկ եւ չկան այսօր՝ որովհետեւ մեկնեցան անոնք վախնալով վրիժառութենէն օսմանեան իշխանութեան եւ թուրք ժողովուրդին⁽⁸⁾: Ըստ թուրք պատմագրութեան՝ յեղափոխականներ էին հայերը, ըմբոստ եւ զինուած, ու մանաւանդ՝ հակաթուրք եւ գործակից անոնց՝ որոնց հետ կենաց եւ մահու գուպարի էր ինկեր Աշխարհը Օսմանին⁽⁹⁾: Ապա՝ կար նաեւ աւերածու-

թիւնը բնութեան: Կանգուն էին այս գիւղերն երբ լքեցին ու անդարձ մեկնեցան տէրերն անոնց, իսկ բնութիւնն ի՛նք փլատակի վերածեց զանոնք: Ո՞վ կրնար դէժ կենալ բնութեան ուժերուն:

Այսօր բազմաթիւ են թրքական այն գործերը, որոնք կը միտին այսքա՛ն միամիտ ձեւով ներկայացնել հայ-թրքական յարաբերութիւնները Հայկական Տասնհինգի շրջանին⁽¹⁰⁾: Ըստ անոնց՝ չեղաւ որեւէ ջարդ, հայերը չենթարկուեցան որեւէ կոտորածի, եւ գործադրուեցաւ ոչ մէկ խժդժութիւն⁽¹¹⁾: Ապա՝ սուտ են եւ յերիւրածոյ բոլոր այն հրահանգները, փաստաթուղթերը, հրամանները, որոշումները, հեռագիրներն ու յայտարարութիւնները՝ զորոնք հայերն այժմ կը ներկայացնեն որպէս ճշմարիտ⁽¹²⁾: Չէր պատահած եւ չպատահեցաւ ալ որեւէ ջարդ, որեւէ կոտորած, որեւէ սպանդ: Եղածը տեղափոխումն էր հայերուն՝ զանոնք հաստատելու համար աւելի ապահով վայրեր՝ պատերազմի դօտիէն հեռու: Այն ատեն օսմանեան իշխանութիւնները վարուեցան հայրաքար եւ տարագրուող հայերուն ապահովեցին անոնց բոլոր կարիքները, հանգիստն ու ապահովութիւնը խաղաղ ու անվտանգ տեղափոխումի մը համար: «Իրականութեան մէջ», կը կեղծեն օսմանեան իշխանութիւնները, «ինչպէս որ հիմա իսկ ցոյց տուինք, կայսերական կառավարութիւնը ձեռք առաւ կարելի բոլոր միջոցառումները՝ պաշտպանելու համար կեանքն ու ստացուածքը այն հայերուն որոնց փոխուած էր բնակավայրը, եւ երբեք չզաղրեցաւ յարգելի անոնց օրինական իրաւունքները»⁽¹³⁾:

Այս բոլորին ճի՛շդ հակառակն է որ կը վկայեն օտար ականատեսները սակայն: Անոնցմէ մէկը՝ զանիացի Հանսինա Մարիէրը որ Պարբերդի Գերմանական Կարմիր Պաշի բոյժոյրերէն մէկն էր՝ հասնելէ ետք Պազէլ՝ կը գրէր թէ «առժամեայ կերպով Կարինի համար որոշուած գերման դերհիւպատոսը (հիւպատոսն ինք գերի էր ինկած Ռուսիոյ մէջ) կ'անցնէր Պարբերդ քաղաքէն 16 Մարտ 1915-ին՝ գերման երկու զինուորականներու հետ, եւ կարգադրեց այդ երեկոյ ընթրել Գերմանական Կարմիր Պաշի պաշտօնէութեան հետ՝ իր յարգանքները մատուցանելէ ետք կուսակալին: [Ընթրիքին համար] որոշուած ժամուն երեւցան լոկ երկու զինուորականները: Ըսին թէ դերհիւպատոսին հետ այցելիւր էին կուսակալին, բայց ժամանակ մը ետք կուսակալը ցոյց էր տուեր թէ տաղտկալի կը գտնէր իրենց ներկայութիւնը, ուստի հեռացեր էին՝ ձգելով կուսակալն ու դերհիւպատոսը միասին: Անիկա՝ [դերհիւպատոսը] հասաւ երեկոյեան մօտ 9-30-ին՝ մեծապէս յուզուած վիճակով եւ անմիջապէս պատմեց անոնց իր տեսակցութեան նպատակը: Կուսակալը յայտարարեւ էր իրեն թէ Քուրթիոյ հայերը անհրաժեշտ էր, եւ պիտի անպայման բնաջնջուէին: Անիկա ըսաւ թէ անոնք մեծցեր էին հարստութեամբ եւ թիւով՝ այն-

քան որ սպառնալիք մըն էին եղած իշխող ցեղին: [Անոնց] բնաջնջումը միակ դարմանն էր»⁽¹⁴⁾:

Յստակ էր ամէն ինչ առաջի՛ն իսկ վայրկեանէն: Հիմնականը ո՛չ թէ տեղափոխութիւնն էր հայութեան՝ այլ ոչնչացումն անոր: Այս մէկը որոշ էր շա՛տ՝ նոյնիսկ քաղաքական հարցերով չզբաղող Տէյվի-սին համար, որ իր 9 Փետրուար 1918-ի համապարփակ տեղեկագիրով կը հաղորդէր իր մեծաւորներուն, թէ «թէպէտեւ որոշ չափով մը ծանօթ էին դժուարութիւնները ճամբորդութեան՝ այն ատեն ո՛չ մէկը լրիւ կերպով զիտակցեցաւ թէ իրականութեան մէջ ի՞նչ կը նշանակէր «տարագրութիւն»ը: Կառավարութիւնն ըսած էր որ բանտի մէջ գանուող տղամարդերը ազատ պիտի արձակուէին եւ արտօնուէին իրենց ընտանիքներուն հետ մեկնելու: Սոստացած էր նաեւ հայթայթել էշեր եւ սայլեր բոլոր անոնց որոնք կ'ուզէին անոնցմէ, թէպէտեւ, իրականութեան մէջ, բաւարար կենդանի չկար նահանգին մէջ՝ տարագրուելիք ժողովուրդին հինգ տոկոսին համար իսկ, եւ տուեր էր ամէն վստահութիւն՝ թէ անոնք ապահով կերպով պիտի առաջնորդուէին իրենց տեղը: Ոմանք բաւական միամիտ էին հաւատալու ասոր եւ մտածելու թէ [իրենց հասնելիք վայրին մէջ] կեանքը պիտի սկսէին սկիզբէն: Անոնք մեկնեցան ժպտելով եւ յուսալից: Սակայն հայերէն շատեր սարսափի մէջ էին եւ ամէն պատճառ ունէին այդպէս ըլլալու: Հասեր էին տարածայնութիւններ թէ ի՞նչ էր պատահեր [անոնց] որոնք զրկուեր էին բանտէն, թէպէտեւ այն ատեն ոչ մէկ բան յստակ կերպով յայտնի էր անոնց ճակատագիրին մասին: Ամենէն յստակ տեղեկութիւնն ստացուած էր քանի մը կիներէ, որոնք եկեր էին Իջմէն անկէ շաբաթ մը առաջ եւ կամ երկու, եւ ըսեր թէ ոստիկան-զինուորները լեռները տարեր էին բոլոր տղամարդերը այդ զիւղին եւ սպաններ զանոնք: Կիները տեսեր էին ոստիկան-զինուորները, որոնք զիւղ վերադառնալէ ետք կը լուային արիւնն իրենց ձեռքերուն եւ զէնքերուն, ու երբ հարց էին տուեր անոնց թէ ի՞նչ էր պատահեր տղամարդերուն՝ ոստիկան-զինուորներն ըսեր էին թէ սպանուեր էին անոնք: Բացարձակ կերպով ստոյգ ելաւ տեղեկութիւնն այս կիներուն: Աւելին՝ ծանօթ էր որ վտանգաւոր էին ճամբաները, թէպէտեւ կառավարութիւնը խոստացեր էր բաւարար պահակ հայթայթել բոլոր անոնց՝ որոնք պիտի մեկնէին: Անոնք [այդ ճամբաները]՝ լեցուն էին քիւրտերով եւ չիքլներով, որոնք ազատ էին ձգուեր կողոպտելու եւ աւարի տալու: . . . Ասոնք էին այն մարդերը, որոնց պիտի հանդիպէին հայերն իրենց ճամբուն վրայ, եւ ինչպէս որ կառավարութիւնը զիտէր ասիկա, եւ անկասկած որ ի՛նքն էր կարգադրած այս մէկը՝ դիւրաւ հասկնալի կը դառնայ հայերը տարագրելու անոր իսկական նըպատակը»⁽¹⁵⁾:

Թէ որո՞նք էին տարագրուող հայերը՝ Տէյվիս կը ներկայացնէ զանոնք յստակ կերպով՝ հակառակ անոր որ այժմ կարելի է պնդել թէ հայասէր մէկն էր անիկա: Նո՛յնիսկ կարելի է յայտարարել թէ սիրալիր չէր անիկա հայերուն հանդէպ⁽¹⁶⁾: Ի՛նչ որ ալ ըլլայ իրականութիւնը՝ Տէյվիս կը հաստատէ թէ «չըջանի առեւտուրին մեծ մասը ձեռքն էր անոնց: Դրամատուներու պահեստներուն իննսուն տոկոսը անոնցն էր: Գրեթէ բոլոր առեւտրականները, դրամատէրերը, բժիշկները, ատամնաբոյժները, որմնաղիրները, կղմինտրագործները, թիթեղագործները, փոսպանները, դերձակները, կօշկակարները, եւ այլ արհեստաւորները որոնք այդքան կարելոր էին ժողովուրդի մը կեանքին համար՝ հայեր էին: Որքան որ յետամնաց էր չըջանը՝ այն փոքր յառաջդիմութիւնն իսկ որ կատարուած էր՝ անոնց շնորհիւ էր: Երկիրը մէկ հարուածով պիտի դար մը ետ երթար: Խարբերդի չըջանին մէջ երկրագործութեան ալ մեծ մասը կը կատարուէր հայերուն կողմէ, իսկ գործին մեծ մասը կ'ընէին կիները: Որո՞վհետեւ տարագրութեան հրահանգը կ'ընդգրկէր կիներն ու մանուկներն [ալ]՝ հարիւրաւոր գիւղերու երկրագործ ժողովուրդը պիտի մեկնէր: ... Երբ հրահանգը կը կատարուէր՝ թուրքերն իրե՛նք էին որ անդրադարձան թէ պիտի չկարենային ապրիլ առանց արհեստաւորներէն ոմանց, եւ խնայուեցաւ անոնցմէ ոմանց, որովհետեւ կարիքը կար անոնց»⁽¹⁷⁾:

Տէյվիսն իր պաշտօնին վրայ մնաց ճի՛շտ երեք տարի եւ ինն ամիս, չըջան մը՝ որուն ընթացքին դիմադրուեց «ամէն տեսակի դժուարութիւն եւ հարց»⁽¹⁸⁾: Իրաւ էր որ առաջին քանի մը ամիսներուն անիկա չունեցաւ զինք զրազ պահելիք շատ բան, սակայն հարցերն ու խնդիրներն սկսան բարդանալ 1915-ի Մարտէն ետք, երբ օր մըն ալ, 28 Մարտին, օսմանեան իշխանութիւնները փակեցին հայկական եւ միսիոնարական վարժարանները, որոնց հայ էր մեծամասնութիւնը ուսանողութեան: Այն ատեն Տէյվիսի միջամտութիւնը բաւ եղաւ որ վերաբացուէին անոնք, այսուհանդերձ, ինչպէս կը դնէ ամերիկացի հիւպատոսը՝ այս մէկը «նախարանն էր այն սարսափելի ողբերգութեան, որ տեղի պիտի ունենար Խարբերդի եւ Թուրքիոյ այլ չըջաններուն մէջ՝ տարուան մնացեալ չըջանին»⁽¹⁹⁾:

Խարբերդի եւ Մեղիբէի մէջ կատարուած առաջին այս փորձէն ետք՝ թուրք իշխանութիւնները ձեռնարկեցին լայնածիր փնտռութի մը զէնքի եւ զինամթերքի, եւ ըստ կատարուած յայտարարութեան՝ գտան անոնցմէ: Ականատես այլ օտար վկայ մը կը հաւաստէ թէ «Մայիսի սկիզբը կուսակալը լուր զրկեց քաղաքի Գերման Բողոքական Առաքելութեան Կեդրոնի մեծաւորին եւ պահանջեց անկէ ըսել հայերուն թէ պէտք էր որ յանձնէին իրենց զէնքերը՝ այլապէս, ըսաւ անիկա, ձեռք պիտի առնուէին խստագոյն միջոցառումներ: Պէտք էր

որ միսիոնարները համոզելին զանոնք, որ անմիջապէս յանձնէին իրենց զէնքերը: Առաքելութեան Կեղրոնի մեծաւորը ժողովի մը հրաւիրեց հայ մեծամեծները եւ փոխանցեց անոնց այն՝ ինչ որ ըսեր էր կուսակալը: Հայերը որոշեցին խորհրդակցիլ քաղաքի իրենց թուրք բարեկամներուն հետ, եւ, ուրեմն, կայացաւ խառն ժողով մը Խարբերդի բոլոր թուրք եւ հայ մեծամեծներով: Այս ժողովին թուրք մեծամեծներն ստիպեցին հայերը յանձնել իրենց զէնքերը եւ խոստացան որ եթէ ընէին այդպէս՝ իրենք անձնապէս պիտի երաշխաւորէին անոնց ապահովութիւնը եւ պիտի աշխատէին որ անոնք դժուարութեան չհանդիպէին կառավարութեան կողմէ: Այս խոստումը համոզեց հայերը որ ենթարկուին: [Ուստի] հաւաքեցին իրենց զէնքերը եւ յանձնեցին կուսակալին, սակայն անիկա յայտարարեց, որ բոլորը չէր բերուած»⁽²⁰⁾:

Սկսան խժոժութիւնները: Այսօր կարելի չէ հանդարտ սիրտով կարգալ պատահածներն այն ատեն: Կատարուեցան փնտռութիւնները զէնքի եւ զինամթերքի, եւ «չատ մը պարագաներու, այն ուսմբերը որոնք գտնուեցան ամբաստանուածներու տան բակերուն մէջ՝ իրականութեան մէջ թաղուեր էին հոն ոստիկանութեան կողմէ՝ փաստ մը ստեղծելու համար հայերուն դէմ»⁽²¹⁾:

Այս բոլորին մասին կը խօսի Խարբերդի Գերմանական Ուրբանոցի տնօրէն միսիոնար Եոհաննէս Էհմանն ալ Պոլսոյ գերման գեսպան Ֆրայհէր Ծոն Վանկենհայմին յղուած 5 Մայիս 1915 թուակիր իր հեռագիրով: Ըստ անոր՝ «քանի մը օրէ ի վեր»⁽²²⁾ քաղաքին եւ շրջակայքին քրիստոնեայ տուներուն մէջ խիստ խուզարկութիւններ կը կատարուին, կառավարութեան աչքին կասկածելի նկատուած անձինք կը ձերբակալուին եւ քրիստոնեաներուն կը հրահանգուի իրենց զէնքերը յանձնել: Այս պատճառաւ քրիստոնեայ ամբողջ բնակչութիւնը մատնուեցաւ ահաւոր սոսկումի, վախնալով յոսեգոյն հետեւանքներէ: Իմ այս երկիրը անցուցած 18 տարիներու փորձառութեան վրայ հիմնուած ճշգրիտ տեղեկութեանց համաձայն... այս կուսակալութեան բացարձակ մեծամասնութիւնը ամբողջ բնակչութեան՝ կառավարութեան հնազանդ է եւ երբեք միտքէն չ'անցըներ անոր դէմ ապստամբիլ: Քսանէն մինչեւ 45 տարեկան էրիկ մարդիկ արդէն առանց դժուարութեան զօրակոչին հետեւած են: Քրիստոնեայ բնակչութիւնը արդէն իր կարելին ըրաւ զինուորական պիտոյքի գըրաւման խնդրին մէջ, ըստ կարելոյն կառավարութեան ընդառաջ երթալ, — անանկ որ՝ ես մարդկութեան գաղափարի անունով կը խնդրեմ մեր վիլայէթի քրիստոնեայ բնակչութեան համար գութ եւ պաշտպանութիւն հայցել: Ընդհանուր կառավարիչը զիս վստահեցուց ամէն

միջոց ձեռք առնել, որպէսզի այս կացութիւնը խաղաղ կերպով կարգադրուի: Ինքն ալ անձամբ այս տեղի քրիստոնեայ բնակչութեան խաղաղասէր նկարագրին համոզուած է»⁽²³⁾:

Սակայն այսքան մեղմ չէր պատկերը ըստ Մարիա ձէյքըպսընին, որուն օրագրութիւնը սեւ կը ներկայացնէ ամէն ինչ: Ահա թէ ի՞նչպէս.

«1 Մայիս 1915. — Պարբերդի մէջ խառնակութիւն կը տիրէ: Շատ մը խանութներ ու տուններ խուզարկուելէ ետք՝ գոցուեցան... Շատերուն տուններէն գրութիւններ գտնուեցան: Բոլոր այր մարդիկը բանտարկուեցան: Նոյնը պատահեցաւ նաեւ Մեզիրէի եւ Հիւսէյնիկի մէջ: Բոլորը վախի մէջ են: Զարգ մը կը նախատեսեն:

«2 Մայիս 1915. — Այսօր նորէն շատեր ձերբակալուեցան ու բանտ նետուեցան: Ամենէն քիչը յիսուն հոգի կային: Նոյն ատեն տունները խուզարկուեցան: Խուզարկութիւններ տեղի կ'ունենան նաեւ գիւղերու եւ այլ քաղաքներու մէջ՝ ինչպէս Մալաթիա, Պիթլիս եւ Վան: Փողոցներուն մէջ պահակներ դրուեցան: Ասոնք պիտի հետպնդեն որպէսզի տուններու մէջ հաւաքոյթներ չկազմակերպեն [հայերը]: Նման պարագայ մը անմիջապէս ոստիկանութեան պիտի տեղեկացնեն: Բժիշկ անգամ պէտք չէ որ կանչեն...»

«3 Մայիս 1915. — Երէկ գիշեր դարձեալ տունները խուզարկեցին: Ժողովուրդը սարսափի ու ահի մատնեցին: Այսօր Փերջենջ եւ ուրիշ գիւղեր ալ խուզարկուեցան եւ բանտարկեալներն ալ անշուշտ կը շտանան: Այս խեղճ մարդիկը երկար ատեն բանտարկուած պիտի մնան՝ մինչեւ որ գրաւուած գրքերն ու թուղթերը քննուին: Երբոր բանտարկեալներուն ճաշ տանին՝ զինուորները կամ պահակները իրենք կ'առնեն եւ իրենք ալ կ'ուտեն: Խեղճ բանտարկեալներն ալ կտոր մը սեւ հացով կ'ապրին: Բոլորն ալ կը կարծեն թէ այս բոլորը Զարդի մը սկզբնաւորութիւնն է:

«4 Մայիս 1915. — Ժողովուրդը սարսափի մէջ է: Բոլորն ալ կ'ըսեն թէ այս բոլորը նախապէս ծրագրուած է եւ որոշ է որ Զարդի մը սկզբնաւորութիւնն է, որովհետեւ հինգ օր ժամանակ տրուած է որպէսզի իրենց զէնքերը կառավարութեան յանձնեն: Բոլորն ալ սակայն կ'ըսեն թէ պիտի չյանձնեն: Եւ եթէ յանձնեն, կը մտածեն, թուրքերը պիտի կատողին ու վրէժնին պիտի լուծեն: Շատ մը հայեր ճամբաներու նորոգութեանց համար դրկուած են: Հոգէի մէջ 600 ծառ կտրած են: Ասոր համար հայերը յանցաւոր կը նկատեն: Այս եւ նման սուտ բաները պատրուակ բռնելով՝ թուրքերը կրնան ըսել թէ հայերը արդարութեամբ կը պատժուին:

«5 Մայիս 1915. — Թուրքերն ու քուրդերը կը սպառնան: Ասոնք բացէ ի բաց կ'ըսեն թէ Զարդ մը տեղի պիտի ունենայ: Թուրք կիներն

ալ, որոնք ստեղծութեամբ լեցուած են, կ'ըսեն թէ այս պատերազմին պատճառը քրիստոնեաներն են: Յանցաւորը քրիստոնեաներն են, որոնք պատճառ եղան այսքան մարդոց մահուան: Թուրք կիներ կ'ըսեն նաեւ թէ քրիստոնեայ բժիշկները թոյն կու տային թուրք գինուորներուն: [Իսկ կուսակալն ալ յայտարարած էր էհմանին, թէ] այնքան ատեն որ ես վալի եմ՝ բան մըն ալ պիտի չպատահի»⁽²⁴⁾:

Այս բոլորը ամբողջացնելու կու գայ Տէյվիսի տեղեկագիրը, որ կը հաստատէ պարզօրէն թէ «կարեւորութիւն ներկայացնող գրեթէ ամէն մարդ ձերբակալուեցաւ եւ նետուեցաւ բանտ՝ առնուազն ժամանակաւոր կերպով: Ասոնցմէ շատեր ենթարկուեցան ծեծի: Ոմանք եղան թուահար: Ոմանք ծեծն ստացան իրենց մերկ կռնակին վրայ: Ոմանց քաշուեցան եղունգները, ուրիշներու . . . գլխուն, պիտին եւ մօրուքին մազերը: Անոնք ձգուեցան անօթի ու բազմաթիւ ժամեր իրենց թեւերէն կախուած: Բոլորն ալ ձեռով մը ենթարկուեցան շարշարանքի»⁽²⁵⁾:

Պատկերը շատ աւելի սեւ կը ներկայացնէ Արսէն Խաչիկեանը սակայն, որ կը գրէ թէ «Մայիս 10-էն սկսան ծեծ, [եւ] շարշարանք հետեւեալ կերպով: Նախ սկսան ծեծել, յետոյ ծեծուողները պայտել, բեւեռել, գլուխները մեքենայից մէջտեղ դնել եւ ճգմել: Վերջին կերպը շարաշար կերպով գործադրուեցաւ Եփրատ Գուլէճի փրօֆէսօրներու [ն] վրայ. չմոռնամ բսել թէ աքցաններով սկսան նաեւ ոմանց եղունգները եւ մատները քակել, ձեռքերուն մէջ քեզապսուի⁽²⁶⁾ լեցնել, վառել եւ տանջանքները այսպէս կրկնապատկել»⁽²⁷⁾:

Այս իրավիճակի մասին Տէյվիսն արդէն իսկ տեղեկագրեր էր Պուլիս իր 19 Ապրիլի, 5 Մայիսի, եւ 2, 12, 24 եւ 27 Յունիսի հեռագիրներով, որոնցմէ ետք՝ 30 Յունիսի հեռագիր մը շատ լայն բանալով կարկինը՝ կ'եզրակացնէր թէ տարագրութիւնը որուն մասին կը խօսուէր՝ «ձեւ մըն էր . . . բնաջնջելու համար հայ ժողովուրդը, . . . միջոցառում մը որ հաւանաբար շատ աւելի մեծ է պատմութեան մէջ գտնուող որեւէ բանէ»⁽²⁸⁾:

Զէնքերու հաւաքումէն անմիջապէս ետք, 23 Յունիսին, ըստ Տէյվիսի՝ «բանի մը հարիւր հոգի հայերու ամենէն հանրաձայնօթներէն տեղական բանտէն զրկուեցան եզան սայլերով անձանօթ ուղղութեամբ մը: . . . Այս մարդերէն ոչ իսկ մէկ հատը կրցաւ ազատիլ եւ երկար ատեն յստակ ոչինչ գիտցուեցաւ անոնց ճակատագրին մասին: . . . Յետագային իմացուեցաւ որ այս մարդիկը գրեթէ բոլորն ալ ջարդուեր էին Խարբերդի եւ Տիգրանակերտի կէս ճամբուն վրայ՝ Արդանա Մատէնի մօտ»⁽²⁹⁾: Յունիս 30-ի իր հեռագիրով Տէյվիս գրեթէ նոյն բաները կը տեղեկագրէր Պուսոյ ամերիկեան դեսպան

Հենրի Մորկընթոյին՝ աւելցնելով նաեւ թէ «կը խորհիմ թէ շատ քիչ կաւկած կայ թէ ... [ջարդը] կազմակերպուած էր»⁽³⁰⁾։

Ըստ Խաչիկեանի՝ աքսորուածներուն «թիւը 1500-1600 կը լինէր... կը լսենք որ բանտարկեալները գիշերները կը քշեն...։ Պսակ Վարդապետը դիմում կը կատարէ եւ վերադարձին վերջնականապէս կը ձերբակալուի. տասնհինգ օր անօթի ծարաւ բանտը անցընելէ վերջ 900 (ինն հարիւր) ինտելիգենտներու հետ կ'աքսորուի արդէն ու ժապառ եղած»⁽³¹⁾, մինչդեռ տանիմարքացի բոյժքոյր Հանսինա Արխեր կը յայտնէ թէ գիշերով աքսորուածները չորս հարիւր հոգի էին, «որոնց մասին ոչինչ լսուեցաւ։ Ըսուեցաւ թէ հեռուէն լսուեր էին զէնքի ձայներ»⁽³²⁾։

Սակայն լոկ բանտարկեալները չէին աքսորուածները։ Կային նաեւ զինուորական տարիքի երիտասարդները, որոնք «Խարբերդէն որպէս զինուոր առաքուեցան Տիգրանակերտ՝ հոն աշխատելու համար։ Բոլորն ալ ջարդուեցան Արհենի»⁽³³⁾ մօտերը»⁽³⁴⁾։ Հայկական ջարդերու մասին Փրանսայի արտաքին գործերու նախարարութեան ներկայացուած այս յուշագիրը Տիգրանակերտ զրկուածներուն թիւը կու տայ որպէս 1800 հոգի, մինչդեռ գերման ականատես վկայ մը՝ քսան հազար⁽³⁵⁾։ Ինչ որ ալ ըլլան տրուած թիւերը սակայն՝ պէտք չէ մտահան ընել որ տակաւին չէին սկսած տարագրութիւնները, եւ Պոլսոյ գերման գեսպան Վանկենհայմի 19 Յունիս 1915-ի հեռագիրին համաձայն՝ «ներքին գործերու նախարարութեան տուած տեղեկութեան համաձայն՝ այդ տեղի հայերուն տարագրութիւնը չէ որոշուած»⁽³⁶⁾։ Այսինքն։ Սակայն ի՞նչ ըսել 21 Ապրիլ 1915 թուակիր եւ Պեհակտտին Շաքիրի ստորագրութիւնը կրող այն հեռագիրին, որ Խարբերդի կուսակալին միջոցով հասեր էր Խարբերդի Երիտասարդութեան Կուսակցութեան պատասխանատու քարտուղար Իեսնէցի Նազրմին, ու հարց կու տար անոր թէ «այդ տեղէն»⁽³⁷⁾ տարագրուող հայերուն հաշիւը կը մաքրուի՞։ Իմացուցէք անոնց սպանութիւնն ու բնաջնջումը։ Թէ ոչ անոնք միայն տեղահան կ'ըլլան ու կ'առաքուին»⁽³⁸⁾։

Ըստ Տէյվիսի՝ Խարբերդի նահանգին գաղթի հրահանգը տրուեցաւ 26 Յունիսին, երբ, Նազլեան արքեպիսկոպոսի տուեալներով՝ «կարդացուեցաւ կառավարական առաջին ծանուցումը, որ կ'ըսէր թէ «քրիստոնեաները, ըլլայ էրիկ մարդ, ըլլայ կին, ըլլայ տղաք, բոլորն ալ անմիջապէս պէտք է մեկնին»⁽³⁹⁾։ Արդէն քանի մը օր առաջ, 21 Յունիսին, ներքին գործերու նախարարութեանէն Խարբերդի կուսակալութեան էր հասեր ծածկագիր շրջաբերական մը, որ կը հրահանգէր տեղական իշխանութիւններուն «բարտաքուելիք հայերէն անոնք գործնք կառավարութիւնը վտանգաւոր կը նկատէ՝ պէտք է հեռացուին

իրենց ընտանիքներով: [Իսկ] առեւտրականներն ու արհեստաւորները որոնք կը դրադին իրենց գործերով՝ պիտի փոխադրուին այլ աւաններ իրենց գտնուած նահանգին մէջ»⁽⁴⁰⁾: Տէյվիս տալէ ետք մեկնումի հրահանգին բովանդակութիւնը՝ կ'աւելցնէ տակաւին, թէ Հայերէն մաս մը պիտի մեկնէր Մամուրէթ Իւլ-Ազիզէն Հինգշաբթի, 1 Յուլիս 1915-ի առաւօտեան, իսկ մնացեալները՝ Յուլիս 3-ի Շարաթ առաւօտեան: Խորհրդի Հայութիւնը պիտի մեկնէր 5 Յուլիսին՝ Երկուշաբթի օր, իսկ շրջակայ գիւղերը՝ Հրահայնիկը, Քեսրիկը, Եւ Եղեգին՝ քանի մը օր ետք, բոլորն ալ դէպի Ուրֆա, «այնուամենայնիւ, երբեք չհաւատացի թէ այս կը նշանակէր Ուրֆա քաղաքը, եւ թէ անոնք պիտի արտօնուէին մնալ այդ քաղաքին մէջ՝ երբ նոյնիսկ հասնէին հոն, ինչպէս որ կը դրէի 30 Յունիս 1915-ի իմ տեղեկագիրովս...: Այդ տեղեկագիրովս յայտներ էի թէ եթէ որեւէ մէկը ողջ մնար այս ճամբորդութենէն՝ կրնար առաքուիլ Ուրֆայէն անդին վայր մը՝ Միջագետքի դաշտագետիներն մէջ, եւ այս էր այն՝ ինչ որ պատահեցաւ»⁽⁴¹⁾:

Տէյվիս միջամտեց կուսակալին մօտ «մարդասիրական գետնի վրայ»⁽⁴²⁾, մինչ Եռհաննէս Էճմանն իր կարգին դիմեց Պոլսոյ գերման դեսպան Վանկենհայմին, եւ յայտնելէ ետք անոր թէ վերջին շրջանին հայութեան կրած տառապանքներէն ետք՝ հիմա ալ կը հրահանգուէր անոր անդարձ մեկնիլ իր տուն ու տեղէն՝ կ'աղերսէր «յանուն մարդասիրութեան սկզբունքի՝ բարեխօսել որ դուք ցոյց տրուի անմեղներու, անկարներու եւ ծերերու հանդէպ»⁽⁴³⁾: Տէյվիսն իր միջամտութենէն ետք տեղեկագրեց կուսակալին հետ իր հանդիպումը Պոլիս՝ իր դեսպանին, որ, Տէյվիսի իսկ բառերով, «ստացաւ իմ հետագիրներս եւ հարցին շուրջ կրցաւ ընել ոչինչ: Անկէ ի վեր ըսուած է ինծի թէ Խորհրդի կացութեան մասին իմ հաղորդագրութիւններուս լուրերն այդքան էին դարձուրելի՝ որ հաւատ չընծայուեցաւ անոնց՝ մինչեւ որ յետագային հաստատուեցան անոնք»⁽⁴⁴⁾:

Իր առաջին միջամտութենէն երկու օր ետք Տէյվիսն անգամ մը եւս ներկայացաւ կուսակալին՝ այս անգամ իրեն հետ ունենալով Մամուրէթ Իւլ-Ազիզ եւ Խորհրդի գտնուող հինգ այլ օտարականներ⁽⁴⁵⁾. այսուհանդերձ կրցաւ ընել ոչինչ: Ըստ Տէյվիսի՝ նոր կուսակալը՝ Սապիթ պէյը «ծայրայեղ կերպով տոգէտ էր եւ անմշակ մարդ: Կոչա էր անիկա իր վարուելակերպով եւ յաճախ բիրտ՝ իր տգիտութեան պատճառով: Անոր ամբողջ կեանքն անցած էր Տերսիմի քիւրտերուն մէջ: Իրականութեան մէջ՝ մաս մը քիւրտ էր անիկա: ... Ստացեր էր ոչ մէկ կրթութիւն: Կը խօսէր լոկ թրքերէն, եւ չէր ճամբորդած այդ նահանգէն դուրս՝ մինչեւ որ եկեր էր Խորհրդի... Սակայն հակառակ ուսումի եւ աշխարհի ճանաչողութեան իր թերիին՝

բնական ճարպիկութեան եւ արեւելեան խորամանկութեան մարդն էր անիկա: . . . Կը թուէր թէ ազնիւ էր եւ գթասիրտ՝ հակառակ այն իրողութեան որ թուրք պետութեան մարդկութեան դէմ ահաւոր ոճիրները գործադրող գլխաւոր գործիչներէն մէկն էր»⁽⁴⁶⁾:

Խարբերդի եւ Մեղիբէի մէջ առկայ կացութեան մօտէն տեղեակ պահուող գերման դեսպանատունը, սակայն, միշտ ալ խուլ ականջ ձեւացաւ էհմանի հեռագիրներուն եւ դիմումներուն: Յունիս 26-ի իր հեռագիրով էհման իմաց տուաւ Պոլիս՝ իր մեծաւորին, որ յայտարարուած էր գաղթը «քաղաքի եւ դաւառի բոլոր քրիստոնեաներուն համար»⁽⁴⁷⁾, որուն որպէս պատասխան՝ Վանկենհայմ պատասխանեց անդրդուելի կերպով, թէ կարելի չէր յետս կոչել շրջանի հայերուն մասին առնուած որոշումը⁽⁴⁸⁾: Ինչ որ ալ ըլլար իրականութիւնը՝ Հինդչարթի, 1 Յուլիս 1915-ին ճամբայ հանուեցաւ հիմնական առաջին կարաւանը Մամուրէթ իւլ-Ազիզի հայ գաղթականներուն: «Հայերէն հազարաւորներ»՝ պիտի գրէր Տէյվիսը յետագային՝ «որոնց հրահանգուած էր մեկնել այդ օրը՝ մեկնեցան առանց ընդդիմութեան. . . : Ակնկալեցի որ ոմանք պիտի ընդդիմանային եւ թէ արիւնը պիտի վազէր հրահանգին գործադրուելէն առաջ: [Սակայն] լսեցի ո՛չ իսկ մէկ անհատի մասին որ ընդդիմանար կամ մերժէր անսալ հրահանգին, թէպէտեւ ոմանք յայտարարեցին թէ պիտի չլքէին իրենց տուները եւ ձգէին որ ոստիկանութիւնն սպաններ զիրենք հոն»⁽⁴⁹⁾: Ըստ Տէյվիսեան այլ տեղեկագիրի մը⁽⁵⁰⁾՝ «Յունիս 1-ին՝ 3000 մարդ (մեծ մասով կիներ, աղջիկներ եւ մանուկներ) ձգեցին Խարբերդը՝ եօթանասուն ոստիկաններու եւ ազդեցիկ թուրքի մը՝ Փայիզ պէյի ընկերակցութեամբ»⁽⁵¹⁾:

«Այդ կարաւանին մեկնումէն մէկ կամ երկու օր ետք հասան կարնեցիները, որոնց ճամբան միացեր էին նաեւ երզնկացիները: Կարնեցիներէն շատեր կը պատկանէին այդ [Կարին] քաղաքի ամենէն ունեւոր եւ ազնուական ընտանիքներուն, [եւ] որոնք, սակայն, այն ատեն կը գտնուէին վատթարագոյն վիճակի մէջ»⁽⁵²⁾: Ոչ միայն այդ՝ ճամբան կողոպտուելէ եւ ենթարկուելէ ետք անիմանալի խժողովութիւններու՝ «ձգուեր էին բացարձակ կերպով մերկ»⁽⁵³⁾: Ըստ Տէյվիսի 11 Յուլիս 1915 թուակիր հեռագիրին՝ «կարելի չէ երեւակայել աւելի ահուելի տեսարան մը: Գրեթէ առանց բացառութեան՝ անոնց բոլորն ալ ցնցոտիապատ էին, անօթի եւ հիւանդ: Տարօրինակ չէ այս մէկը՝ տրուած ըլլալով որ անոնք ճամբաներն էին մօտ երկու ամիսէ ի վեր՝ առանց զգեստի փոփոխութեան, առանց լուացուելու առիթի մը, առանց օթեւանի եւ նուազագոյն ուտելիքի: . . . Երբ մէկը քալէ բազմութեան մէջէն՝ մայրերն իրենց զաւակները կ'առաջարկեն անոր եւ կ'ազաչեն զանոնք առնել: Իրականութեան մէջ՝ թուրքերն այս մանուկ-

ներէն եւ աղջնակներէն վերցուցեր էին իրենց ընտրածները՝ որպէս ստրուկ կամ անկէ [ալ] վար [մակարդակով]: . . . Անոնց մէջ կայ շատ քիչ տղամարդ, որովհետեւ անոնցմէ շատեր սպաննուած են ճամբան: Ասոնք բոլորն ալ կը պատմեն նոյնը, թէ քիւրտերու կողմէ ենթարկուած են յարձակումի եւ կողոպտուած: Անոնցմէ բազմաթիւներ կրկին ու կրկին անգամներ ենթարկուելու էին յարձակումի, ու շատեր, մասնաւորապէս տղամարդերը, սպաննուելու էին: Սպաննուելու էին կիներ ու մանուկներ ալ: Անշուշտ շատեր մեռան հիւանդութենէ, եւ սպաննուեցան ճամբան, եւ մահեր պատահեցան հոս՝ իւրաքանչիւր օրը որ մնացին⁽⁵⁴⁾: Հոս հասան զանազան խումբեր եւ մնալէ ետք մէկ կամ երկու օր՝ քշուեցան յառաջ, առանց որեւէ յստակ թիրախի: Այնուամենայնիւ՝ անոնք որոնք հասան հոս՝ լո՛կ փոքր մէկ մասն են անոնց՝ որոնք ճամբայ ելան»⁽⁵⁵⁾: Եւ հաւատալ որ այս խումբին մայր կարաւանը Կարինէն դուրս էր ելեր իր ինչքերով, ձիերով, ջուրիններով եւ դրամով⁽⁵⁶⁾ Տէր Զօր մեկնելու համար՝ ըստ Կարինի գերման դերհիւպատոս Շէօպներ-Րիխթերի 2 Յունիս 1915 թուականի եւ Պոլսոյ գերման դեսպան Վանկենհայմին յղուած հեռագիրին⁽⁵⁷⁾:

Սակայն լո՛կ կարնեցիներուն եւ երզնկացիներուն մնացորդացը չէր որ հասաւ Պարբերդ: Հոն հասան նաեւ հայ բանակայինները Օսմանեան Կայսրութեան: Իրականութեան մէջ, Տէյվիսի տուեալներուն համաձայն, կայսերական բանակին հայ զինուորները Պարբերդ հասան երկու հերթով: Նախ, Յունիսի վերջերուն, Հայաստանի գանազան կողմերէն Մամուրէթ իւլ-Ազիզի Կարմիր Գոնազը հաւաքուած հազարաւոր հայ զինուորներէն զրկուեցան քանի մը հազար զինուոր: «Նախ անոնցմէ առնուել էին զէնքերը, եւ խիստ հսկողութեամբ քանի մը օր հոն պահուելէ ետք, որուն ընթացքին մեծապէս տառապել էին անսուղութենէ եւ պապակէ, եւ անոնց բարեկամներուն եւ ազգականներուն արգիլուել էր տեսնել զանոնք՝ զրկուելու էին գիշերով: Իշխանութիւններն ըսին թէ անոնք առաքուել էին Ուրֆա՝ աշխատելու համար ճամբաներուն վրայ, որովհետեւ բանակին մէջ կարիքը չկար անոնց գործօն ծառայութեան: Կուսակալը վստահեցուց անոնց ազգականները թէ երկու շաբաթէն կրնային նամակ ստանալ անոնցմէ: Աւելորդ է ըսել, թէ ստացուեցաւ ո՛չ մէկ նամակ, եւ բաւական ետքն էր որ որեւէ բան յստակօրէն գիտցուեցաւ անոնց ճակատագիրին մասին, եւ ի վերջոյ ի յայտ եկաւ որ անոնց բոլորն ալ հրացանազարկ էին եղած իրենց ընկերացոյ ոստիկան-զինուորներու կողմէ: Այն ատեն ո՛չ մէկ խափր էր դրուել ընդմէջ անոնց՝ որոնք վճարել էին զինուորութենէ ազատ կացուցուելու տուրքը եւ անոնց՝ որոնք չէին վճարած»⁽⁵⁸⁾:

Բանակայիններու այս առաջին խումբի ճակատագիրին մասին շատ աւելի մանրամասն կերպով կը խօսի այլ փաստաթուղթ մը, զոր Պրայս կը հրատարակէ իր Կապոյտ Գիրքին մէջ: Ըստ անոր՝ «մօտ 13․000 հայ զինուորներ ալ, որոնք կը ծառայէին Պարբերդի օսման-եան բանակներուն մէջ՝ զինաթափ եղան իրենց զէնքերէն եւ փոխադրուեցան Մեզրէի Կարմիր Պալատը, [եւ] խիստ հսկողութեան տակ պահուեցան հոն, ու ձգուեցան որ անօթութիւնն ու պապակը կատարէին իրենց գործը: [Անոնց] բարեկամներուն եւ ազգականներուն խիստ կերպով արգիլուեցաւ որեւէ յարաբերութիւն անոնց հետ: Շարաթ մը ետք բոլոր բանտարկեալները կրկին դուրս բերուեցան եւ զրկուեցան անձանօթ ուղղութեամբ մը՝ սուսերակիր ոստիկան-զինուորներու հսկողութեան տակ: Անոնց ըսուել էր որ պիտի փոխադրուէին Ուրֆա՝ աշխատելու համար ճամբաներուն եւ հաղորդակցութեան գիծերուն վրայ, սակայն երբ հասան Պազըր Մատենի մօտ Կէյզին Պան գիւղը՝ բոլորն ալ հրացանագար կ'եղան եւ անոնց զիակները նետուեցան մեծ խրամի մը մէջ, որ մասնաւոր կերպով պատրաստուած էր անոնց համար: Այս վերաբերումին ենթարկուած հայ երիտասարդութեան մեծամասնութիւնը ուսանողներն էին Ամերիկեան Գոլէճին⁽⁵⁹⁾, Ֆրանսական Գոլէճին⁽⁶⁰⁾ եւ Հայկական⁽⁶¹⁾ Կեդրոնական Վարժարանին»⁽⁶²⁾: Իր կարգին՝ գերման ականատես վկայ մը պիտի հաստատէր, թէ «Պարբերդ հայերու գերեզմանոցը եղաւ: . . . Մարտի սկիզբները, 20․000 հայ զինուորներու հրամայուեցաւ քաղաքը թողուլ եւ երթալ ճամբաներ շինելու համար: . . . Բայց զինուորները հազիւ մեկնած, իմացանք որ անոնք սպաննուած եւ զետնախորշի մը մէջ նետուած էին: Քանի մը հոգի միայն կրցած էին ճողպրիլ եւ անոնցմէ է որ իմացանք անցած դարձածը»⁽⁶³⁾:

Աւելի ուշ՝ նոյնանման ճակատագիր մը վերապահուած եղաւ այլ բանակայիններու նաեւ, որոնք Օսմանեան Կայսրութեան զանազան կողմերէն վերադարձան տուն՝ Պարբերդ կամ Մեզիրէ: «1915-16-ի ձմեռան» կը գրէ ամերիկացի հիւպատոս Տէյվիսն իր մեծաւորներուն՝ «Մամուրէթ իւլ-Ազիզ վերադարձուեցան հայ զինուորներու ջոկատներ, որոնցմէ ոմանք վերջին տարին եղեր էին բանակին հետ Կարինի մէջ, եւ ուրիշներ՝ որոնք գտնուել էին Մուշի եւ Բաղէշի մէջ, եւ ցորեն փոխադրեր բանակին համար: Ասոնցմէ շատեր չէին գիտեր իսկ թէ հայ ժողովուրդն աքսորուած էր անկէ, եւ տուն եկան իրենց մեկնած ընտանիքները գտնելու համար: [Սակայն] ազատ չձգուեցան անոնք, այլ օր մը, երկու պահ գրուելէ ետք բանտի մէջ՝ տարուեցան: Ոմանք ընդդիմացան եւ քանի մը հոգի փախուստ տուին, սակայն սպաննուեցաւ մեծամասնութիւնն անոնց: Քաղաքէն անմիջապէս դուրս տեսած եմ անոնց զիակները ճամբուն վրայ: Մէկը, զոր տեսայ

Մնունդին յաջորդ օրը⁽⁶⁴⁾՝ կը գտնուէր զօրանոցներէն երեք հարիւր ոտք անդին⁽⁶⁵⁾: Երբ երկու ժամ ետք վերադարձայ ծիով չըջապտոյտէս՝ վերցուած էր մարմինը: Մեզի համար դաղտնիք մը մնաց թէ զինուորներն ինչո՞ւ էին բերուեր ա՛յսքան հեռուէն՝ լո՛կ սպաննուելու համար իրե՛նց իսկ նահանգին մէջ»⁽⁶⁶⁾:

Յուլիս 3-ի Շարաթ առաւօտեան Մամուրէթ իւլ-Ազիզէն ճամբայ հանուեցաւ երկրորդ կարաւան մը հայ գաղթականներու, եւ ուղղութիւն վերցուց դէպի Մալաթիա՝ որպէս թէ հասնելու համար Ուրֆա: Այս կարաւանն «աւելի մեծ էր Հինգշաբթի մեկնողէն: Այդ մէկը մեկներ էր Տիգրանակերտի ճամբով՝ ո՛ւղղակի Ուրֆա: Այս անգամ, թէպէտեւ անոնց մեկնելիք վայրը կ'ենթադրուի ըլլալ նոյնը՝ ինչպէս միւսներունը՝ տարագրուողները զրկուեցան Մալաթիոյ վրայով, որ բաւական դուրս էր ճամբէն: Կարաւաններուն տարբեր ուղիներով առաքուելուն պատճառն անշուշտ արգիլել էր անոնց իմանալ այն ճակատագիրը որ եղած էր զիրենք նախորդողներունը»⁽⁶⁷⁾: Այսուհանդերձ՝ «քանի մը հազարէ աւելի» եզոզ այս կարաւանն⁽⁶⁸⁾ երբ հասաւ Մալաթիա՝ «տղամարդերը բաժնուեցան կիներէն եւ անոնց բոլորն ալ վայրագօրէն ջարդուեցան ոստիկան-զինուորներուն կողմէ: Գիտենք թէ ի՞նչպէս ոստիկան-զինուորները հաղորդեցին կարգ մը մարդերու, [թէ] կուսակալը լուր էր զրկէր որ անոնք վերադառնային Մամուրէթ իւլ-Ազիզ, եւ երբ զանոնք տարեր էին քիչ մը հեռու [մնացեալներէն]՝ սպաններ էին բոլորն ալ: զիտենք թէ ի՞նչպէս բռնաբարուեցան անոնց կիներն ու աղջիկները այդ վերջիններուն ընկերացող ոստիկան-զինուորներուն կողմէ: Գիտենք թէ այս կիներն ու մանուկները ի՞նչպէս քշուեցան դէպի անպատները ամրան կիսուն եւ կողոպուտի ու աւարի տրուեցան անոնց ունեցածները: Գիտենք թէ անոնցմէ ոմանք [ի՞նչպէս] վերապրեցան հակառակ իրենց բոլոր դժուարութիւններուն եւ հասան Ուրֆա, Նիզիպ, Հալէպ, Րազզա, Տէր Զօր, եւ այլ վայրեր միջագետեան կիզիչ դաշտագետիներն վրայ: զիտենք թէ անոնցմէ ոմանց ի՞նչպէս շարտունուեցաւ երկար ատեն մնալ այս քաղաքներուն մէջ՝ այլ քշուեցան տեղէ տեղ: լսեցինք թէ [Օսմանեան] Կայսրութեան բոլոր կողմերէն հազարաւորներ ի՞նչպէս մէկտեղուեցան Տէր Զօրի մէջ, ուր տարի մը մնացին թշուառագոյն չքաւորութեան մէջ, որմէ ետք այն բոլորը որոնք տակաւին չէին ոչնչացած՝ ջարդուեցան քաղաքէն անմիջապէս դուրս [հանուելով]: Հիմնուելով վերապրողներու ճշգրիտ պատումներուն վրայ՝ կարելի է բազմաթիւ հատորներ գրել տարագրուած հայերու տառապանքներուն մասին: Շատ քան եմ լսած փորձառութիւններուն մասին այն անհատներու շրթներէն՝ որոնք ի վերջոյ ճամբայ մը գտնելով վերադարձան Մամուրէթ իւլ-Ազիզ»⁽⁶⁹⁾:

Յուլիս 4-ի գիշերը ձերբակալուեցան մօտ ութը հարիւր հոգի Պարբերդի, Մամուրէթ իւլ-Ազիզի եւ շրջակայ գիւղերու մէջ ու թրխմուեցան բանտ՝ «առանց անոնց դէմ որեւէ ամբաստանութեան: Ըստ տեղեկութիւններու՝ խուզարկուեցան բոլորն ալ եւ անոնցմէ առնուեցան անոնց դրամը, թանկարժէք իրերը, եւ նոյնիսկ մէկ մասն անոնց զգեստներուն: Անոնցմէ ոմանք բանտարկուեր էին նախապէս, եւ ազատ արձակուեր կուսակալին կողմէ, որ կ'ըսէր թէ պիտի արտօնուէին իրենց ընտանիքներուն հետ մեկնելու: Երկուշաբթի առաւօտեան ժամը երեքի ատենները ոստիկանապետը եկաւ բանտ եւ այդ մարդերուն բոլորն ալ հանուեցան բակ ու շաբթի դրուեցան անոր առջեւ: Ոստիկանապետին հրահանգով կրկին խուզարկուելէ ետք՝ կապկըպուեցան տասնչորսական հոգիէ բաղկացած խումբերով եւ արեւածագէն առաջ տարուեցան քաղաքէն, որպէսզի բնակիչները չկարենային տեսնել զանոնք: Ոստիկան-զինուորներու խիստ հսկողութեան ներքեւ անոնք տարուեցան քրտական գիւղ մը, ուր հասան կէսօրէն ետք: Հոս հասնելէ ետք՝ գիշերելու համար զետեղուեցան մզկիթին մէջ եւ այլ չէնքերու՝ առանց ուտելիքի եւ ջուրի: . . . Այդ գիշեր մնացին հոն եւ յաջորդ առաւօտ տարուեցան քանի մը ժամ հեռու գտնուող ձոր մը, ուր բոլորին ալ հրահանգուեցաւ նստիլ: Ապա այդ օրուան՝ Յուլիս 7-ի Չորեքշաբթիի կէսօրին՝ ոստիկան-զինուորներն սկսան հրացանազարկ ընել զանոնք: Երկու կամ երեք ձեռք փամփուշտ արձակելէ եւ անոնցմէ շատերն սպաննելէ ետք՝ հրահանգուեցաւ ա'լ փամփուշտ չվատնել՝ այլ սրահար ընել մնացեալները»⁽⁷⁰⁾:

Այս բոլորին մասին գրեթէ նոյն բառերով կը խօսի Տէյվիսի 11 Յուլիսի տեղեկագիր-հեռագիրը նաեւ, ու կ'աւելցնէ թէ «քանի մը հոգի կարողացան ազատիլ՝ հաւանաբար ո'չ աւելի քան երկու կամ երեք»⁽⁷¹⁾, իսկ անոնք ալ «հաստատեցին պատմութիւնն այնպէս՝ ինչպէս որ անիկա նախապէս պատմուած էր ինծի»⁽⁷²⁾:

Յուլիս 6-ի օրագրային իր արձանագրութեամբ այս բոլորին շուրջ կը խօսի տանիմարքացի բոյժբոյր Մարիա Եագոպսընն ալ, եւ կ'ըսէ թէ «այսօր Պարբերդի մէջ սոսկալի դէպքեր կը պատահին: Զինուորները քաղաքը պաշարած են: Բոլոր այր մարդիկը կը բանտարկեն, ինչպէս նաեւ 13 տարեկանէն վեր տղաքը: Երկու հարիւր հոգի ձերբակալուեցան եւ Մեզիրէ զրկուեցան, որոնք ուրիշ բանտարկեալներու հետ այդ տեղէն զրկուեցան դէպի Պան Քէօյ: Անոնք 800 հոգի էին: Երբ անոնք Պան Քէօյի միւս կողմը կ'անցնին՝ . . . դէպի լեռ կ'առաջնորդուին: Երբ դաշտ մը կը հասնին՝ հրաման կը տրուի որ քիչ մը հանգչին, սակայն երբ պահակները արտրեալներու ճամբան շղթայի տակ կ'առնեն՝ այն ատեն կը գիտնան որ իրենց մահը մօտ էր: Իրիկուան դէմ զինուորներուն հրաման կը տրուի որ կրակեն: Ամէն կողմէ

փամփուշտ կը տեղայ: Անոնց փամփուշտները կը վերջանան ու տակաւին շատերը սպաննուած չեն ըլլար: Թուրքերը կը սկսին իրենց մէջքերէն կախուած կացիներն ու գէնքերուն սուիները գործածել»⁽⁷³⁾:

Արդէն Յուլիս 5-էն սկսեալ եւ շարժուան մնացեալ օրերուն՝ ձերբակալուած հայերը խումբ առ խումբ առաքուեցան Խարբերդէն եւ շրջակայ գիւղերէն, եւ ինչպէս կը գրէ Տէյվիսը՝ «Իւրաքանչիւր քանի մը օրն անգամ մը խումբ մը մեկնեցաւ՝ խումբ մը մէկ ուղղութեամբ [եւ] ուրիշներ՝ այլ: Իշխանութիւններն աշխատեցան բոլորն ալ զրկել այդքան արագ՝ որքան որ կարելի էր, եւ բաւական յաջողեցան իրենց յայտարարած ծրագիրի [գործադրութեան] մէջ»⁽⁷⁴⁾:

Խժգժութիւններու, ձերբակալութիւններու եւ հայերու պաղարիւն սպաննութեան ահազանացող այս կացութեան առջեւն էր, որ Պոլսոյ գերման դեսպան Վանկենհայմն հաճեցաւ շարժիլ, որովհետեւ ինչպէս է՛համանը կը հաղորդէր իրեն՝ իր 27 Յունիսի հեռագիրով՝ «գաւառի ընդհանուր» կառավարիչը ինք կը յայտարարէ որ տեղահանութեան հրամանը առանց բացառութեան ամբողջ կուսակալութեան սահմանին մէջ բոլոր տեղացի քրիստոնեաներու մասին տրուած է՝ առանց ազգութեանց տարբերութեան»⁽⁷⁵⁾: Իսկ Գերմանական Կարմիր Պաշտ մէջ ծառայող տանիմարքացի բոյժքոյր Հանսինա Արխերն իր կարգին կը վկայէր թէ Մամուրէթ Իւլ-Ազիզի կուսակալը յայտարարած էր թէ «իմ հրահանգներս բոլոր հայերը տեղահանելու մասին են: Բացառութիւն չեմ կրնար ընել հրահանգուածէն»⁽⁷⁶⁾:

Ինչպէս որ ալ շարժէր կուսակալը Մամուրէթ Իւլ-Ազիզին, եւ ինչպէս որ ալ գործադրուէին Թալէաթի, Երիտասարդ-Թուրք Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան եւ Պեհաէտտին Շաքիրի ղեկավարած Թեչքիլաթ-ը Մախսուսէի հրահանգներն ու հրամանները՝ Վանկենհայմը յուշագիր մը յանձնեց Բարձրագոյն Դրան Մեծ Վեզիրին, որ ի միջի այլոց կ'ըսէր անիկա, թէ Օսմանեան Կայսերական Կառավարութեան հրամանագրած ճնշումները Արեւելեան Անատոլիոյ նահանգներուն հայ բնակչութեան դէմ թելադրուած ըլլալով զինուորական պատճառներէ եւ ըլլալով օրինական պաշտպանութեան միջոցառում մը՝ գերման կառավարութիւնը հեռու է ընդգիմանալ անոնց գործադրութեան՝ այդքան ատեն որքան որ այդ միջոցառումները կը միտին ամրապնդել Թուրքիոյ ներքին կացութիւնը եւ զսպուած պահել ըմբոստացումի փորձերը:

«Այս հարցին շուրջ գերման կառավարութեան հայեացքներն ամբողջութեամբ կը համընկնին Համաձայնական Տէրութիւններուն տուած սպառնալիքին Բարձրագոյն Դրան որպէս պատասխան տուած բացատրութեան»⁽⁷⁷⁾ . . . :

«Միւս կողմէ՝ գերման կառավարութիւնը չի կրնար սքողել վտանգներն այն միջոցառումներուն որոնք կը ստեղծուին անոնց ուժգնութենէն եւ զանգուածային տեղահանութիւններէն, որոնք անխտիր կ'ընդգրկեն յանցաւորներն ու անմեղները, մանաւանդ երբ այս միջոցառումներուն կ'ընկերանան բրտութեան արարքներ՝ ինչպէս ջարդերն ու կողոպուտները:

«Իժրախտաբար ըստ գեսպանատուն հասած տեղեկութիւններուն՝ տեղական իշխանութիւնները չեն կարողացած արգիլել այսպիսի արարքներ, որոնք ցաւալի են բոլոր պարագաներու ալ:

«... Գերման կառավարութիւնն իր պարտականութիւնը կը նկատէ, որպէս բարեկամ պետութիւն եւ Թուրքիոյ դաշնակից, Բարձրագոյն Դրան ուշադրութիւնը հրաւիրել այն հետեւանքներուն վրայ որոնք կրնան յառաջանալ ի վնաս իրենց հասարակաց շահերուն, ինչպէս պատերազմի ատեն՝ նոյնպէս ալ ապագային...:

«Իեսպանութիւնը կը խորհի, որ անհրաժեշտ է կտրուկ հրահանգներ տալ զաւառային իշխանութիւններուն՝ ձեռք առնելու համար ազդու միջոցառումներ, որպէսզի պահպանուին կեանքն ու ինչքը տեղահանուած հայերուն, ինչպէս անոնց փոխադրութեան ատեն՝ նոյնպէս ալ անոնց նոր բնակավայրերուն մէջ»⁽⁷⁸⁾:

Ջարդի ու կոտորածի համատարած այս աշխարհէն ներս էր որ Տէյվիս գտաւ ամբոխ կազմող հաւաքականութիւնը աջ ու ահեակ ալետատան հայ մանուկներուն, ահա թէ ինչո՞ւ համար Յուլիս 10-ին ներկայացաւ կուսակալին՝ անոնց համար որբանոց մը հաստատելու խնդրանքով, եւ ինչպէս կը գրէ ամերիկացի հիւպատոսը, «հանդիպեցայ ամբողջական մերժումի», որովհետեւ իշխանութիւնները որոշեր էին իրենք հաստատել որբանոց մը հայ մանուկին համար: «Իրաւէր», կը շարունակէ Տէյվիսը քիչ մը անդին, «որ թրքական կառավարութիւնը հաստատեց որբանոց մը հայ մանուկներուն համար եւ կարճ ժամանակ մը զանոնք պահեց հոն: Ապա անհետացան մանուկները, եւ ըսուեցաւ որ անոնց բոլորն ալ տարուեր էին Խարբերդէն մօտաւորապէս քսան մղոն հեռու գտնուող լիճ մը ու ջրամոյն եղած հոն»⁽⁷⁹⁾: Արդէն՝ 7 Սեպտեմբեր 1915-ի իր հեռագիրով Տէյվիսը հաղորդեր էր իրականութիւնը Պոլիս՝ Հենրի Մորկընթոյին, թէ «վերջերս մեծ թիւ մը հայ մանուկներու, որոնք պահուեր էին թրքական որբանոցի մը մէջ» առաքուած են թէ ի՞նչ պատճառով բացի ճամբուն վրայ սպաննուելու կամ մեռնելու համար՝ զժուար է կռահել: Այսպիսով հայերուն տարագրութիւնն ու սպանող շարունակուած են ամբողջ ամրան [տեւոզութեան] եւ անկարելի է տեսնել աւարտը»⁽⁸⁰⁾: Տէյվիսէն քանի մը օր ետք, 21 Սեպտեմբերի օրագրային իր արձանագրութեամբ Եագոպսընը պիտի ըսէր, թէ «գերեզմանոցին մէջ ապրողները այսօր

աքսորուեցան»⁽⁸¹⁾։ Իրականութեան մէջ՝ անոնք մնացորդացն էին կիներուն եւ մանուկներուն, որոնք գետեղուեր էին գերեզմանները՝ թրքական իշխանութիւններու իսկ ձեռքով։

Պարբերդի մէջ թրքական որբանոցի նոյն պատմութեան մասին կը խօսի տանիմարքացի բոյժքոյր Հանսինա Արխերն ալ։ Ըստ անոր՝ կուսակալը հաստատեց որբանոց մը եւ հոն հաւաքեց եօթը հարիւր հայ մանուկ, եւ ինչպէս Պր․ Չավրիէֆ կը հաղորդէ պատմութիւնը Արխերին՝ որբանոցին մէջ «իւրաքանչիւր տասներկու կամ տասնհինգ մանուկի համար կար հայ խնամատարուհի մը, եւ անոնք լաւ էին զգեստաւորուած եւ սնուցուած։ «Տես թէ կառավարութիւնը ի՞նչպէս հոգ կը տանի հայերուն» ըսաւ կուսակալը [որբանոցն այցելող Արխերին], եւ անիկա տուն դարձաւ զարմացած եւ ուրախ․ սակայն երբ քանի մը օր ետք կրկին այցելեց որբանոցը՝ եօթը հարիւր մանուկներէն մնացեր էին լո՛ւկ տասներեքը, մնացեալը անհետացած էր։ Անիկա իմացաւ, որ անոնք տարուեր էին քաղաքէն վեց ժամ հեռաւորութեան վրայ լիճ մը եւ ջրամոյն եղած հոն։ Ապա երեք հարիւր նոր մանուկներ հաւաքուեցան որբանոցին մէջ, եւ քոյր Հանսինա Արխեր կը հաւատար, որ անո՛նցն ալ եղաւ ճակատագիրն իրենց նախորդներուն։ Այս գոհերը մնացորդացն էին Պարբերդի հայ մանուկներուն։ Գեղեցկագոյն տղաքն ու ամենէն սիրուն աղջիկները ընտրուեր ու տարուեր էին շրջանի թուրքերուն եւ քիւրտերուն կողմէ, եւ մնացեալները ինկեր էին ձեռքը կառավարութեան [եւ] փճացան այս ձեւով»⁽⁸²⁾։ Իրականութեան մէջ՝ հայու մանչ ու աղջիկ վերցնողները շարժեցան ըստ հրահանգի, որովհետեւ 27 Յունիս 1915-ի ծածկագիր հրահանգ մը կը յայտնէր Մամուրէթ իւլ-Ազիզի կուսակալութեան՝ թէ հայ «մանուկներէն [պէտք է] որդեգրել տալ հայ չգտնուող գիւղերու եւ աւաններու [թուրք] բնակիչներէն երեւելիներուն եւ դաստիարակել [զանոնք] ըստ մահմետական սովորութիւններուն։ Եթէ չատ են մանուկները՝ [կարելի է] անոնցմէ տալ իրենց ապրուստը դժուար շահողներուն, պայմանով որ անոնք ըլլան մաքուր եւ պատուաւոր [թուրք] ընտանիքներ, իւրաքանչիւր պզտիկի համար երեսուն դրուշ ամսական վճարում մը կատարելով։ Պէտք է ցուցակի մը մէջ արձանագրել անունը պզտիկին եւ զայն՝ որդեգրող ընտանիքին եւ անոր օրինակը ղրկել կեդրոն»⁽⁸³⁾։

Անչո՛ւշտ որ Տէյվիսի հիմնել ուզած որբանոցը առաջինը պիտի չըլլար իր տեսակին մէջ։ Պարբերդ քաղաքն արդէն իսկ ունէր իր որբանոց-դպրոցը, որ կը պատկանէր Գերման Միսիոնարական Առաքելութեան։ «Պր․ Էհմանը հոն՝ [Պարբերդի մէջ] ապրեր էր քսան տարի, տնօրէնն էր որբանոցի մը, ուր կային հինգ հարիւր հայ մանուկներ, եւ շատ գործօն դեր էր խաղացեր հայերն ստիպելու մէջ որ յանձնեն

իրենց գէնքերը, երբ թրքական իշխանութիւնները պահանջեր էին զանոնք»⁽⁸⁴⁾։ Կար նաեւ որբախնամ, խնամատարական եւ հիւանդանոցային հաստատութիւնը Ամերիկեան Միսիոնարական Պորտ Առաքելութեան, ուր այն ատեն եւ անկէ ետք մինչեւ 1922 թուականը, մեծ դեր պիտի խաղային տանիմարքացի Մարիա Եագոպուրնն ու անոր զործակից բոյժքոյրերը ամերիկացի բժիշկ միսիոնարներու կողքին։ Յետագային՝ Թուրք Ազգայնական Շարժումի ղեկավարներէն երիտասարդ-թուրք Զօր-Քիաղիմ Գարապեթիրն ալ պիտի հաստատէր, թէ որբանոցներ հաստատուել էին Սերաստիոյ եւ Երզնկայի մէջ, ուր հաւաքուած որբերը նստեր էին անուսում, աղտոտ եւ անբան, առանց սակայն ըսելու թէ ի՞նչ որբեր էին անոնք եւ ինչո՞ւ էին լքուել այդպէս⁽⁸⁵⁾։ Այսօր յատակ է ճակատագիրն այս երկու քաղաքներու մէջ հաւաքուած որբերուն։ Թրքացուեցան անոնք կրօնքով, լեզուով եւ ապա՝ գիտակցութեամբ եւ արիւնով նաեւ⁽⁸⁶⁾։

Առկայ եւ վատթարացող սա կացութեան մէջ անհրաժեշտ էր ընել անկարելին, եւ առ այդ՝ Տէյվիս ըրաւ ինչ որ կարող էր, ու գրեց, օրը օրին տեղեկագրեց ամէն ինչ Պոլսոյ ամերիկեան դեսպան Հենրի Մորկընթոյին, սակայն հակառակ «հեռագիր հեռագրի եւ լուր լուրի ետեւէ» առաքուած ըլլալուն՝ անոնցմէ ոչ մէկը տեղ հասաւ՝ պարզօրէն անոր համար որ «իմ ամենէն կարեւոր տեղեկագիրներէն շատեր վար էին դրուել եւ կարդացուել թրքական իշխանութիւններուն կողմէ՝ ինծի համար ստեղծելով բազմաթիւ դժուարութիւններ»⁽⁸⁷⁾։

Սակայն Տէյվիսը շմնաց առանձին։ Իրեն նման տեղեկատուի եւ տեղեկագրողի պաշտօնը վարեց Խարբերդի գերման միսիոնար Եոհաննէս Էհմանը նաեւ, որ իր 5 Մայիս, 18, 25, 26 եւ 27 Յունիս, 10, 17 եւ 21 Յուլիս, 12 եւ 19 Օգոստոս, եւ 6 ու 10 Սեպտեմբեր թուակիր հեռագիրներով ամէն ինչ հաղորդեց Պոլսոյ գերման դեսպան Վանկենհայմին, եւ անոր մահէն ետքն ալ՝ զայն փոխարինող Իշխան Հոհենլոհէ-Լանկենպուրկին։ Այժմ այս փաստաթուղթերուն մէկ մասը կարելի է գտնել Եոհաննէս Լեփսիուսի Տէոյչլանտ ունտ Արմենիէն, 1914-1918 հատորին մէջ⁽⁸⁸⁾, եւ Էհմանի զանազան հեռագիրներուն տրուած պատասխանները՝ նոյն տեղը՝ զանազան էջերու վրայ⁽⁸⁹⁾, իսկ գերման միսիոնարին 5 Մայիս, 18, 25 եւ 27 Յունիս, 10, 17 եւ 21 Յուլիս, 12 եւ 19 Օգոստոս, եւ 6 Սեպտեմբեր թուակիր հեռագիրներն ու անոնց տրուած 19 Մայիս, 27 Յունիս, 1 եւ 14 Յուլիս, 22 Օգոստոս եւ 8 Սեպտեմբեր 1915 թուակիր պատասխանները Պոլսոյ գերման դեսպան Ֆոն Վանկենհայմի եւ ապա Իշխան Հոհենլոհէ-Լանկենպուրկի ստորագրութեամբ՝ Ահարոնեանի մօտ⁽⁹⁰⁾։

Ամերիկեան թէ գերմանական՝ բոլոր փաստաթուղթերն ալ կը խօսին վատէն վատթարին եւ անկէ ալ վատթարագոյնին մեկնող կա-

ցութեան մը մասին: Այս դրութեան մասին կը խօսի նաև Անգլիական Տեղեկատու Դիւանէն Փրանսական պատերազմական նախարարութեան հասած 21 Յուլիս 1915 թուակիր տեղեկագիր մը, որ կ'ըսէ ի միջի այլոց թէ «վստահելի անհատներ, որոնք կու գան Պոլիսէն՝ Փոքր Ասիոյ հայերուն վիճակը կը ներկայացնեն բացարձակ կերպով ողբերգական: Կարելի է ըսել թէ ընդհանրապէս բոլոր հայերն ալ արտաքսուած են Կարինի, Մարզուանի, Տիգրանակերտի, Խարբերդի եւ Բաղէշի իրենց գիւղերէն, եւ թէ անոնց ըսուած է մեկնիլ զէպի հարաւ՝ Մուսուլի եւ Տէյրի»⁽⁹¹⁾ անապատը: Շատեր մեռած են ճամբան եւ անձանօթ կը մնայ վիճակը ուրիշներուն: Շատ մը պարագաներու՝ կիներ գետեղուած են հարեմներու մէջ»⁽⁹²⁾: Աւելի անդին՝ անթուակիր՝ այլ Փրանսայի արտաքին գործերու նախարարութեան հասած յուշագիր մը Հայկական Տասնհինգի ջարդերուն մասին կ'ըսէ ի միջի այլոց, թէ «թուրքիայէն փախուստ տալ կարողացած քանի մը հայերու եւ յոյներու, ինչպէս նաև չէզոք վկաներու բերնէն քաղուած պատումներ կը հաստատեն թէ գրեթէ ա'լ հայ չէ մնացած Կարինի, Տրապիզոնի, Սեբաստիոյ, Խարբերդի, Բաղէշի եւ Տիգրանակերտի նահանգներուն մէջ: Մէկ միլիոն կը գնահատուի թիւը այս նահանգներու հայերուն, որոնք տեղահանուած են ու տարագրուած զէպի հարաւ»⁽⁹³⁾, մինչդեռ 10 Սեպտեմբեր 1915 թուակիր եւ կրկին Փրանսայի արտաքին գործերու նախարարութեան յղուած յուշագիր մը մասնաւորելով իր խօսքը թիւերու վրայ՝ կ'ըսէր թէ «գործէ քաշուած [եւ] Հալէպ գտնուող հիւպատոս Պր. Կիի մէկ տեղեկագիրը որ առաքուած է քանի մը շաբաթ առաջ՝ կու տայ առաջին ընդհանուր մէկ գնահատականը կացութեան: Կը խորհինք թէ անիկա աւելի զէշ է քան ըսուածը: Այսօր կրկին կ'իմանանք թէ վերջերս նոր ջարդեր կազմակերպուած են Խարբերդի մէջ (ուր կը խօսուի 40,000 սպանուածի մասին), Անգարայի (10,000), Իզմիրի [եւ] Պրուսայի մէջ: 700,000 կը գնահատուի թիւն այն հայերուն՝ որոնք ներսերն առարկան եղան տարագրումի միջոցառումներուն, [եւ] 400,000-է աւելի թիւն անոնց՝ որոնք կարողացան վերապրիլ»⁽⁹⁴⁾:

Ահաւասիկ այսպիսի պայմաններու մէջ էր որ ի վերջոյ հասան օրերը իսլամական տօներուն եւ Տէյվիս, առ ի պարտականութիւն, ներկայացաւ կուսակալին՝ շնորհաւորական այցելութեան մը համար⁽⁹⁵⁾, եւ յառաջ տարուող մտերիմ գրոյցի մը ընթացքին՝ խնդրեց անկէ մարդկայնութեան սիրոյն ա'լ վերջ դնել տարագրութիւններուն եւ կատարուող յայտնի եւ անյայտ ջարդերուն: Խնդրանքին ի պատասխան՝ կուսակալը յայտնեց թէ ինք պատրաստ էր կատարելու իրմէ խնդրուած որեւէ բան՝ պայմանով որ խնդրանքը ներկայացուէր գրաւոր կերպով, որպէսզի ինքն ալ իր կարգին ներկայացնէր զայն

ոստիկանապետին՝ ի կատարումն անմիջական անհրաժեշտին: Սա-
 կայն նույն գիշերն իսկ ոստիկանապետը ներկայացաւ Տէյվիսին եւ ա-
 ոաջարկեց անոր այլ բաներու կարգին յայտնել գրուելիք նամակին
 մէջ թէ «բոլոր [այն] հայերը որոնք պետութեան դէմ յանցաւոր էին
 դաւադրութեամբ՝ տեղահանուած էին կամ ալ այլապէս պատժուած,
 եւ թէ մնացողներէն ոչ մէկն աղերս ունէր դաւադրութիւններու հետ,
 կամ ալ յանցաւոր էր պետութեան դէմ որեւէ օրինազանցութեամբ:
 Այն ատեն վերահասու դարձայ»՝ կը շարունակէ Տէյվիս, «կուսակա-
 լին ինձմէ նամակ մը պահանջելու նպատակին եւ ա՛յն ճարպիկու-
 թեանը որով ինք եւ ոստիկանապետը ծրագրած էին իմ միամիտ խընդ-
 րանքս ի նպաստ իրենց դարձնելու: . . . Նաեւ անիկա ուզեց որ նամա-
 կին մէջ խօսիմ ռուսերու եւ զէնքերու մասին, զորոնք ոստիկանու-
 թիւնը կ'ըսէր թէ գտեր էր հայերուն մօտ, եւ յիշատակել որոշ զէպ-
 քեր՝ որոնց ընթացքին կ'ըսուէր թէ հայերն ընդդիմացեր էին կամ
 վնասեր թուրք պաշտօնէութեան. ասոնցմէ ետք կրնայի հաստատել
 թէ մնացողներէն ո՛չ մէկը խառնուած էր այս գործերուն: . . . Անիկա
 պնդեց իր պահանջին վրայ՝ առաջարկելով որ անմիջապէս պիտի
 կեցնէր տեղահանութիւնները՝ եթէ կատարէի այսպիսի հաստատում
 մը, թէպէտեւ, ըսաւ անիկա, դեռ նոր էր ստացեր հրահանգներ հա-
 յերուն դէմ որդեգրելու համար նախկինէն աւելի խիստ միջոցառում-
 ներ, եւ արդէն իսկ կատարուեր էին կարգադրութիւնները վա՛ղն իսկ
 սկսելու համար տարագրութիւններուն: . . . Բաւական յստակ էր որ
 հրահանգուած էր իրեն ձեռք անցընել զայն⁽⁹⁶⁾, եւ թէ անիկա կը պա-
 հանջուէր որոշ նպատակով: . . . Առանց նկատի առնելու իր խոս-
 տումները (որոնց շէի հաւատար)՝ յանձն առի հաստատագիր մը
 շտալով զինք մերժելու պատասխանատուութիւնը, եւ վստահ եմ, որ
 հետեւանքն աւելի վատ չեղաւ եթէ ըրած ըլլայի այնպէ՛ս ինչպէս որ
 կը պահանջէր ի՛նք»⁽⁹⁷⁾:

Տէյվիս չտուաւ պահանջուած հաստատագիրը, եւ ձերբակա-
 լութիւններն ու ջարդերը շարունակուեցան ըստ առաջնայն՝ անխնայ
 կերպով եւ տեղահանութիւն անունին տակ: Ըստ Տէյվիսի՝ «այդ նա-
 հանգին մէջ հարիւր հազար հայեր քշուած էին իրենց տուներէն՝
 թուրքերուն կողմէ, եւ անոնց մեծ մասը ջարդուած էր»⁽⁹⁸⁾: Պոլսոյ
 ամերիկեան դեսպան Հենրի Մորկընթոյի առաքուած 24 Յուլիս 1915
 թուակիր հեռագիր մը կ'ըսէր արդէն թէ մինչ այդ Խարբերդէն եւ Սա-
 մուրէթ իւլ-Ազիզէն տարագրուեր էին տասներկուֆէն տասնհինգ
 հազար հայեր, եւ ետին կը մնային հազարէն հազար հինգ հարիւր մի-
 այն՝ մասնաւոր արտօնութեամբ կամ կաշառակերութեամբ: Բազմա-
 հազար ժողովուրդ ալ մեկներ էր շրջակայ գիւղերէն: «Բոլորը մէկ
 առած՝ այդ շրջանի ժողովուրդին հաւանաբար մէկ երրորդը մեկներ

էր»⁽⁹⁹⁾՝ կ'եզրակացնէր ամերիկեան հիւպատոսը: Իսկ Սեպտեմբեր 7-ի իր հեռագիրով անիկա պիտի հաստատէր տակաւին թէ «տարագրութիւնները չէին դադրած, . . . եւ տակաւին հիմա ո՛չ մէկ ձեւով յստակ է թէ դադրած է անիկա: Յուլիսի վերջին շարթուան եւ Օգոստոսի առաջին մասին մէջ մեծ թիւով կիներ ու մանուկներ ձերբակալուեցան՝ թէ՛ հոս թէ՛ ալ գիւղերը: Անոնք զրկուեցան հսկողութեան տակ, եւ յամառ զրոյցներ կը շրջին թէ անոնք սպաննուեցան [այնպէս]՝ ինչպէս որ եղեր էին տղամարդերը»⁽¹⁰⁰⁾:

Ճի՛շդ հոս ալ անհրաժեշտ կը դառնայ կատարել փոքր մէկ քաղուածքը Մարիա Եագոպսընի եւ Վեր. Հայր Լուիի օրագիրներուն՝ վերահասու դառնալու համար այն առօրեային, որ վիճակուեցաւ մնացորդացին Խարբերդի հայութեան: Այսպէ՛ս ուրեմն՝

«10 Յուլիս 1915. Այսօր կը յայտարարուէր որ [հայերուն] բոլորն ալ պէտք էր որ ճամբայ ելնէին. ո՛չ իսկ թուշուն մը պիտի մնար»⁽¹⁰¹⁾:

«11 Յուլիս 1915. Կարմիր Տունէն 400 հոգիի՝ երկրորդ առաքումը»:

«12 Յուլիս 1915. Իրիկուան ժամը 7-ին, մթնկոխին, հայ կաթողիկէ կղերին հապճեպ մեկնումը. . . »⁽¹⁰²⁾:

«13-14 Յուլիս 1915. Առտուան դէմ Քեզին-Պան հասնելով, մեր տարագիրները, ժանտարմայի մը կողմէ բերուած նամակով մը, իբրեւ թէ քաղաք վերադառնալու հրաման կը ստանան: . . . Անոնք կ'առաջնորդուին Քեզինէն ժամ մը հեռու ձորի մը մէջ, ուր կը ջարդուին: . . . Յետոյ անոնք կանխաւ պատրաստուած փոսերու մէջ նետուած են»⁽¹⁰³⁾:

«18 Յուլիս 1915. Կիրակի առտու, հազիւ թէ լուսցած, զինուորները մէկ տունէն միւսը կ'երթան, դռները կը զարնեն եւ ժողովուրդը կոշտութեամբ դուրս կը քաշկուտեն: Անոնցմէ շատեր նոյնիսկ ժամանակ չեն ունենար, որ քանի մը մանր մուկներ քաներ առնեն հետերնին: Անոնք իրենց տուներէն հազիւ դուրս կ'ելլեն՝ զինուորները դռները կը կղպեն ու բանալիները կը գրաւեն»⁽¹⁰⁴⁾:

«21 Յուլիս 1915. . . Այն հինգ ընտանիքները որոնք կառավարութեան հրամանով կը մնային՝ կը մնային շնորհիւ իրենց արհեստներուն — կօշկակար, թիթեղագործ, ժամագործ, արծաթագործ եւ հինգերորդն ալ կազմարար մըն էր: Ասոնք ալ ի վերջոյ իրենց տուներէն վտարուեցան»⁽¹⁰⁵⁾:

«24 Յուլիս 1915. Թուրքերը մզկիթներուն մէջ կը յայտարարեն թէ, երբ թուրք մը հայ մը պահէ՝ պիտի կախուի եւ իր տունն ալ պիտի այրուի»⁽¹⁰⁶⁾:

«28 Յուլիս 1915. Պարբերդի մէջ մնացած բոլոր հայերը այսօր պիտի զրկուէին: . . . [Բայց] մինչեւ իրիկուն բան մը չպատահեցաւ»⁽¹⁰⁷⁾:

«29 Յուլիս 1915. Երէկ գիշեր հարիւր հայեր Պարբերդէն զբրկուեցան: Բայց հազիւ թէ երկու ժամուայ ճամբայ գացած էին, ուր աղբիւր մը կար, հոն զինուորները կը սկսին անընդհատ կրակել [անոնց վրայ]»⁽¹⁰⁸⁾:

«3 Օգոստոս 1915. Ընդհանուր սուգի օր մ'եղաւ՝ 500 բանտարկեալներու տարագրութեան հետեւանքով, որոնք — 4-ական՝ իրարու կապուած — առտուան ժամը 5-ին դէպի էրֆենեկի շրջակաները տարուելով անգութ վարձուներու ենթարկուեցան»⁽¹⁰⁹⁾:

«4 Օգոստոս 1915. Երէկ գիշեր Մեղրէի բանտէն մաս մը այրեցաւ, եւ 32 բանտարկեալներ, որոնք նոյն մասին մէջ կը գտնուէին՝ սպաննուեցան: . . . Կէսօրէն ետք խումբ մը զինուորներ հիւանդանոց եկան ու պահանջեցին բոլոր հայերը: . . . Յետոյ զինուորները այս խեղճերը հրելով հրմշակելով տարին»⁽¹¹⁰⁾:

«7 Օգոստոս 1915. Երէկ գիշեր նկատեցինք որ Չմշկածագի դաշտը կ'այրէր: Շատ մը գիւղեր, ընդարձակ դաշտեր ու պարտէզներ կ'այրէին: . . . Հեռուէն կը տեսնէինք բոցերը որ [ոնք] կը մագլցէին դէպի լեռները: Եւ յաջորդ օրը, գրեթէ ամբողջ օրը, շարունակուեցան: Հիմա միայն թանձր մութի սիւները կ'երեւին»⁽¹¹¹⁾:

«9 Օգոստոս 1915. . . Հիւսէյնիկի մէջ մնացողներն ալ հիմա կը քշուին: Թուրքերը հիմա մաքրագործումի հարցը այնքան չէին դժուարացներ: Անոնք հայերը գիւղէն քիչ մը դուրս կը հանէին ու կը սպաննէին: Երանի թէ թուրքերը զանոնք մինչեւ գետը տանէին ու ջրամոյն ընէին, այդպէս աւելի լաւ կ'ըլլար՝ քան թէ զանոնք մտրակէին ու շարչարէին մինչեւ որ մեռնէին»⁽¹¹²⁾:

«10 Օգոստոս 1915. Մեղրէէն դէպի արեւելք՝ մէկ ժամ հեռու գտնուող Հիւսէյնիկ, կէս ժամ հեռու Քեսերիկ (Կեսարիկ), երեք ժամ դէպի հարաւ՝ Պոլլու, երկու ժամ դէպի հարաւ-արեւմուտք՝ Դատիմ եւ երեք ժամ հիւսիս՝ Բագմաշէն անուն գիւղերուն պարպումը տեղի կ'ունենայ»⁽¹¹³⁾:

«14 Օգոստոս 1915. Հիւպատոսին⁽¹¹⁴⁾ եւ իր թուրք բարապանին հետ ներս մտանք [Թրքական գերեզմանոցէն], ուր կառավարութիւնը հիւանդ հայերը հաւաքած էր: Անկարելի է նկարագրել ինչ որ տեսանք: Ոեւէ մէկը այդ տեղէն դուրս չէր կրնար ելլել: . . . Այս խեղճերը այլեւս մարդու կերպարանք չունէին: Նոյնիսկ անասունները այս տեսակ տեղ մը եւ այս վիճակով չէին գտնուեր: Թուրքերը վրէժնին կը լուծէին եւ զանոնք կը սպաննէին: Հայերը այրուած քրիստոնեաներ էին, որ [ոնք] իրենց թշնամիներուն ձեռքին մատնուած էին:

Թուրքին փափաքն էր անոնց մահը դժուարացնել: Եւ այդ այդքան՝ որքան որ կարելի էր: ... Խոյլույի⁽¹¹⁵⁾ մէջ բոլոր կիները հաւաքեր էին ու սպաններ... Այր մարդիկը արդէն սպաննուած էին: Կիներուն հրամայուած էր հագուստնին հանել եւ յետոյ երկու երկու իրարու վրայ դնելով զանոնք գլխատեր են»⁽¹¹⁶⁾:

«15 Օգոստոս 1915. Գայմագամը⁽¹¹⁷⁾ պաշտօնազուրկ եղած է եւ մենք ուրախ ենք... Ան շատերուն չարչարանքին ու մահուան պատճառ եղած է»⁽¹¹⁸⁾:

«26 Օգոստոս 1915. Ժամանում Տրապիզոնի տարագիրներուն առաջին խումբին, որոնք ամբողջովին քաղաքէն դուրս [Թրքական] գերեզմանատան մէջ կուտակուեցան»⁽¹¹⁹⁾:

«29 Օգոստոս 1915. Ժանտարմաները կը ձերբակալեն բոլոր անոնք, որոնք մէջնեղերը կը գտնուին. ուրեմն՝ ազատ կացուցման օրէնքը տակաւին չի գործադրուիր»⁽¹²⁰⁾:

«1 Սեպտեմբեր 1915. Թուրք մը էհմանին կ'ըսէ.

«— Եթէ քան տարի վերջ ապստամբութիւն մը ծագի՝ յանցանքը ձերն է: Դուք վեց հազար⁽¹²¹⁾ ռճրագործներ կը պահէք ձեր քով: Թուրքերու համար ասիկա մեծ մտահոգութիւն մըն է, նոյն իսկ այն քիչ մը կամ քանի մը համեստ որբերը որոնք կ'ապրին:

«Մը. էհմանը զինք վստահեցուցած էր, որ ապստամբութիւն մը տեղի պիտի չունենար, որովհետեւ արդէն հայ չէր մնացած»⁽¹²²⁾:

«21 Սեպտեմբեր 1915. [Թրքական] գերեզմանոցին մէջ ապրողները այսօր արսորուեցան»⁽¹²³⁾:

«25 Սեպտեմբեր 1915. Գաղթականներուն շատնալուն հետեւանքով նորէն պիտի սկսին ժողովուրդը արսորել: Երբ զինուորները փողոցներուն մէջ հայեր տեսնէին կամ ճամբաներու վրայ՝ կ'արսորէին [զանոնք]: Հիմա թուրքերը քիչ մը յոգնութիւն ցոյց կու տան: Պարզապէս արսորեալները քաղաքէն դուրս կը հանեն ու կը սպաննեն:

«Այսօր կառավարութեան կողմէ քանի մը զինուորներ եկան եւ հրամայեցին որ հիւանդանոցին մէջ գտնուող բոլոր հայերը յանձնուէին»⁽¹²⁴⁾:

«26 Սեպտեմբեր 1915. Այսօր խումբ մը նոր հաւաքուածներ բշուեցան: Նոյն ատեն փողոցներուն մէջ կը յայտարարուէր թէ բոլորին ներում եկած էր եւ ժողովուրդը պէտք չէ [ր որ] վախնար, որովհետեւ ամէն ինչ վերջացած էր»⁽¹²⁵⁾:

«28 Սեպտեմբեր 1915. Քառասուն այր մարդիկ որոնք գատուած էին էրզրումի եւ Երզնկայի արսորեալներու զանազան խումբերէն՝ հոս բանտարկուած էին: Այսօր արսորուեցան»⁽¹²⁶⁾:

«2 Հոկտեմբեր 1915. Հիւպատոսը Քեզին Խան զնաց: Ան կը պատմէր թէ զիակաները խանին մուտքին խիտ-խիտ դիզուած էին եւ

այնքան շատ էին որ վայրի գազանները յագեցեր էին ուտել: . . . Քուրդերէ բաղկացած պաշը պոզուֆ⁽¹²⁷⁾ զինեալներ քաղաք եկած էին: ժողովուրդը ահ ու սարսափի մէջ էր թէ ի՞նչ պիտի պատահէր: Քուրդերը կ'ըսէին թէ իրենք զրկուեր էին թուրքերու [ն] կողմէ, որպէսզի գային եւ բնաջնջէին ողջ մնացած հայերը: Ասոնցմէ խումբ մը վայրին կողմէ զրկուեցաւ Կէօլճիւք: Ասոնք թնդանօթներ ալ ունէին, որպէսզի ոմրակոծէին լճին մէջի պղտիկ կղզին: Կ'ըսուէր թէ հոն շատ մը հայեր պահուրտած էին»⁽¹²⁸⁾:

«13 Հոկտեմբեր 1915. Մարտինի երիտասարդներն ալ աքսորուեցան: Միայն հայերը չեն՝ այլ արարախօս սուրիացիներն ու ասորիներն ալ: Ամենէն առաջ այր մարդիկը զրկուեցան, յետոյ հարուստ կիներն ու իրենց փոքրիկները: . . . Բայց հազիւ թէ անոնք վեց ժամ ճամբայ կտրած էին՝ անոնց ինչքերը կողոպտուեցան: Բոլոր կիները սպաննուեցան: . . . Այնպէս կ'երեւայ թէ միայն հայերը չէ [ին] որ կը ջարդուէին՝ այլ բոլոր քրիստոնեաները: Սուրբ պատերազմը սկսած էր»⁽¹²⁹⁾:

«22 Հոկտեմբեր 1915. Բոլոր հայ փոքրիկները որոնք թրքական որբանոցներու մէջ կը գտնուէին՝ սայլերով տարուած ու գետը նետուած էին»⁽¹³⁰⁾:

«24 Հոկտեմբեր 1915. [Հապուսին] որ առաջ լման հայկական գիւղ մըն էր՝ հիմա փոխուած է: Ամէն կողմ, մեղուներու նման, քուրդերը կը բզզան: Կան նաեւ թուրքեր եւ չերքէզներ»⁽¹³¹⁾:

«25 Հոկտեմբեր 1915. Հիւպատոսը եւ Տոքթ. էթրինսընը Խարբերէզն մէկ օրուայ հետու գիւղ մը գացին: Անոնք վերադարձան ուրսին.

«— Այդ գիւղին մէջ 5-6000 դիակ տեսանք: Դիակները թաղուած չէին: Գէշ վիճակի մէջ էին»⁽¹³²⁾:

«4 Նոյեմբեր 1915. Կէսօրէ [ն] առաջ այսպէս անցաւ: Թուրքերը հայերը կը ձերբակալէին ու կառավարական չէնք կը տանէին, անկէ յետոյ ալ՝ զիրենք արտաներու մէջ կը բանտարկէին: Ժամը 1-30-ին հինգ զինուորներ եկան եւ մեզմէ պահանջեցին այն այր մարդիկն ու տղաքը որոնք մեր քով կը գտնուէին»⁽¹³³⁾:

«6 Նոյեմբեր 1915. Կէսօրէն յետոյ կ'ըսուէր թէ նորէն կը ձերբակալէին շատերը [հայերէն] եւ վախ ու սարսափ կը տիրէր կիներու եւ փոքրիկներու մէջ»⁽¹³⁴⁾: «. . . Տարագրուեցան 700 կիներ եւ մանուկներ, որոնք Մեզրէէն եւ շրջակայքէն հաւաքուած էին»⁽¹³⁵⁾:

«7 Նոյեմբեր 1915. «350 հոգի ղէպի Տիգրանակերտ տարագրուելով՝ Մեզրէի ամենամօտ Քեսերիկ գիւղին շրջակաները սրէ անցուեցան՝ ոստիկաններու Տնօրէնին ներկայութեամբ»⁽¹³⁶⁾:

«8 նոյեմբեր 1915. Խուժր մը այրեր, 35 հոգի, եւ 400 կիներ, որոնք հաւաքուած էին գիւղերէն՝ մնացող հայերուն հետ արտուեցան: Անոնցմէ շատեր մահմետական դարձած էին: Բայց [ա՛ն ալ] օգուտ ըրած չէր»⁽¹³⁷⁾:

«12 Դեկտեմբեր 1915. 1600 հայեր ջարդուեցան Շէյխան-Տերեսի (Սատանի Ձոր) ըսուած ձորին մէջ: . . . Նոյն եւ հետեւեալ օրերը 150, 400, 900, [եւ] 1000 հոգի նոց զանազան խուժրերով բանուորական հայ զօրքեր հասան»⁽¹³⁸⁾:

«13 Դեկտեմբեր 1915. 900 հոգի նոց գունդը փախուստ տուած ըլլալով՝ ամբողջովին ջարդուեցաւ: Մշոյ մէջ ընդհանուր տեղահանութեան լուրերը կը հասնին»⁽¹³⁹⁾:

Ահաւոր էր, պարզօրէն ահաւոր էր կացութիւնը ժամանակակից վկաներու իսկ տուեալներով: Չերբակալութիւն, գաղթ եւ սպանդ յաջորդեցին իրարու եւ Մամուրէթ իւլ-Ազիզի մէջ առկայ դիւանագիտական օտար ներկայացուցիչներ հեռագրեցին, տեղեկագրեցին եւ դիմեցին հոն, ուր անհրաժեշտ էր եւ իստեցան մարդասիրութեան անունով: Դիւանագիտական այս խաղերուն ընթացքին էր որ, նոյեմբեր 4-ին եւ 5-ին կատարուեցան վերջին ձերբակալութիւնները՝ հակառակ որ, ինչպէս կը հաստատէ ամերիկեան հիւպատոսը, շատ ձերբակալութիւններ տեղի չէին ունեցած վերջին քանի մը շաբաթէ ի վեր, սակայն շուտով ազատ արձակուեցան ձերբակալուածներէն ոմանք⁽¹⁴⁰⁾: Ի՛նչ որ ալ ըլլային իրականութիւնները՝ 1915-էն առաջ Խարբերդի նահանգն ունէր հարիւր յիսուն հազարէ աւելի հայութիւն մը, իսկ նոյն տարուան աւարտին կը կարծուէր թէ անկէ կը մնար ութը հազարէ տասը հազար միայն, որմէ հազարէն երկու հազարը գաղթականներ էին այլ նահանգներէ հասած⁽¹⁴¹⁾: Սակայն ժամանակի ընթացքին երեւան եկան ուրիշներ ալ, որոնք պահ էին մտեր քարայրներու եւ լեռներու ձորակներէն ներս, եւ որոնք «եկան մէկը միւսին ետեւէն եւ խնդրեցին ինձմէ լուր հասցնել Ամերիկա՝ [իրենց հարազատներուն]»⁽¹⁴²⁾: Ինչպէս կը հաղորդէ Տէյվիս: Դեկտեմբեր 30-ի իր հեռագիրով անիկա կը յայտնէր սակայն որ «մօտ հարիւր հազար հայերէն որոնք տարի մը առաջ կը բնակէին այս նահանգին մէջ՝ հաւանաբար կան ոչ աւելի քան չորս հազար: Վերջերս յայտարարուեցաւ թէ հարիւրի հինգէն աւելի հայ պիտի չձգուէր այս նահանգին մէջ: Կասկածելի է հիմա թէ կա՞յ այսքանն ալ»⁽¹⁴³⁾:

Սեպտեմբեր 7-ի իր հեռագիրով Տէյվիս կը հաստատէր թէ «այս [նահանգը] կընայ լաւապէս կոշուիլ Թուրքիոյ Սպանդանոց նահանգը, որովհետեւ կ'երեւի թէ գաղթականներն ամէն կողմէ ապահով կերպով հասեր են մինչեւ հոս՝ միմիայն ջարդուելու համար տեղ մը այս նահանգին մէջ»⁽¹⁴⁴⁾: Իսկ մօտ չորս ամիս ետք, Դեկտեմբեր 30-ի

իր հեռագիրով, անիկա պիտի ըսէր պարզօրէն թէ այս ստորագումը «արդարացուած է լրիւ կերպով՝ իմ իմացածներով, եւ անով՝ ինչ որ իրողապէս տեսեր եմ անկէ ի վեր»⁽¹⁴⁵⁾: Արդարեւ՝ 9 Փետրուար 1918 թուակիր իր ընդարձակ տեղեկագիրին աւարտին՝ Տէյվիս կը փութար հաստատելու թէ «ներկայացուող տեղեկագիրէն ի յայտ կու գայ որ անցեալ երեք տարիներուն [կատարած] աշխատանքիս մեծ մասը նուիրուեցաւ հայերուն: Այսուհանդերձ այս տեղեկագիրը չի նպատակադրեր ըլլալ ակնարկ մը ի նպաստ անոնց՝ ինչ որ ալ ըլլան անոնց արժանիքները: Կայքս այնպիսի՛ն էր, որ պատահեցաւ որ ըլլամ վկան այն ահռելի վարմունքին, որուն ենթարկուեցան [հայերը] թուրք կռուավարութեան կողմէ, եւ բնական է որ ըրի այն ինչ որ կրնայի՝ մեղմելու համար անոնց տառապանքը: Անշուշտ կարողացայ համեմատաբար քիչերուն օգտակար ըլլալ անոնց կեանքի ամբողջական քանդումին մէջ, որ տեղի ունեցաւ իմ հոն եղած միջոցիս, ու թէպէտեւ օգնեցի այն բոլորին որոնց կրնայի՝ եղան պարագաներ երբ անկարելի եղաւ որեւէ բան ընել...»⁽¹⁴⁶⁾: Ու յայտնելու համար որ հեքիաթ չէին, եւ չեն, զանազան առիթներով իր մեծաւորներուն յղած տեղեկութիւնները, թէ ճշմարտութիւն էին, լո՛կ ճշմարտութիւն իր պատումները հայկական սպանդին ու ջարդին մասին, եւ թէ խօսքի ուժին վստահուելիքը երբեք ալ բաւարար չէր ուրիշին եւ ուրիշներուն փոխանցելու համար քաշն ու խորքը եղածին ու կատարուածին՝ 30 Դեկտեմբեր 1915-ի իր հեռագրի աւարտին՝ ծածկագիրով Տէյվիս հազորդեց Պոլսոյ ամերիկեան դեսպան Հենրի Մորկընթոյին թէ «կ'ուզեմ հայերու տարագրութեան եւ ջարդերու տեղեկագիրներուն աւելցնել պատումը երկու չրջապտոյտներու, զորոնք ձիով կատարեցի ասկէ հինգ ժամ հեռու գտնուող լիճի մը [չուրջ եւ] ուր տեսայ մեռած մարմինները լրիւ տասը հազար անհատներու, որոնցմէ շատեր սպաննուած էին վերջերս, եւ պատկերազարդել զայն ա՛յն լուսանկարներով զորոնք առի տեղուոյն վրայ: Այժմ խոհեմութիւն պիտի չըլլար այսպիսի տեղեկագիր մը զրկել»⁽¹⁴⁷⁾:

Իրա՛ւ էր Տէյվիս. խոհեմութիւն պիտի չըլլար ա՛չ համընդհանուր եւ համապարփակ տեղեկագիր մը զրկել եւ ոչ ալ զայն խօսուն եւ ճշմարիտ ընծայող ու տեղուոյն վրան առնուած լուսանկարներ, որովհետեւ այժմ Հայկական Տասնհինգով զբաղող քիչ մը ամէն ուսանող Հայոց Պատմութեան՝ գիտէ, փաստացի՛ կերպով գիտէ, թէ ինչպէս Լեսլի Տէյվիսի՝ նոյնպէս նաեւ գերմանական, աւստրիական եւ պուլկարական բազմաթիւ հեռագիրներ եւ տեղեկագիրներ որոնք յղուեք էին Պոլիս՝ իրենց պատկան դեսպանութիւններուն՝ երբեք ալ տեղ չհասան, ի՞նչ փոյթ որ անոնցմէ ոմանք առաքուած ըլլային

բազմաթիւ անգամներ: Այսօր, վստա՛ւորէն, անոնցմէ ոմանք կը գտնուին տասնամեակներու ընթացքին ծանրացող փոշիներուն ներքեւ օսմանեան արխիւներուն, եւ ինչպէս որ ժամանակին անոնց գոյութեան տեղեակ էր Օսմանեան Կայսրութեան պատերազմական նախարար Էնվերը⁽¹⁴⁸⁾, նոյնպէս ալ տեղեակ պիտի ըլլար երէկ ոչ միայն Իսմէթ Ինէօնիւն⁽¹⁴⁹⁾ եւ ժամանակակից գինուորական ու քաղաքական օսմանեան պաշտօնատարներ՝ նո՛յնպէս նաեւ այսօր պարկեշտ եւ անպարկեշտ ուսանողները ժամանակաշրջանի թուրք պատմութեան: Գիտէին, եւ գիտէ՛ր Ինէօնիւն, եւ ի՛նչ որ ըրաւ 14 Դեկտեմբեր 1922-ին կայացող Խաղաղութեան ժողովի Ռազմերկրային Յանձնաժողովի տասնհինգերորդ նիստին՝ անպատկառ ստախօսութիւն մըն էր միայն՝ իսկ դիւանագիտութիւնը կը ճանչնայ ո՛չ ճշմարտախօսութիւն եւ ոչ ալ՝ բարոյական: Ահա թէ ինչո՞ւ Համար կարելի էր թուրքին արիւնոտ ձեռքերը դնել բաղդատութեան ուրիշներուն, բոլո՛ր ուրիշներուն ձեռքերուն Հետ եւ գտնել զանոնք մաքուր, գթառատ, բարեխիղճ, ազնիւ եւ շինարար աշխատանքի նուիրուած:

Սակայն Լեսլի Տէյվիսի 9 Փետրուար 1918 թուակիր այս մէ՛կ Հատիկ տեղեկագիրը, իրեն նախորդող 30 Յունիս, 11 եւ 14 Յուլիս, 6 եւ 7 Սեպտեմբեր եւ 30 Դեկտեմբեր 1915 թուակիր Հեռագիրներով⁽¹⁵⁰⁾, Հայերուն տարագրութիւնն ու ջարդերը փաստարկող եւ Լեսլիի իսկ կողմէն առնուած լուսանկարներով⁽¹⁵¹⁾ եւ գաղթականութիւնը Հրամանագրող 13 Յունիս 1331 թուակիր⁽¹⁵²⁾ յայտարարութեամբ, որ լոյս տեսաւ ինչպէս օսմանեան մամուլի զանազան արտայայտութիւններուն՝ նոյնպէս նաեւ Տրապիզոնի Մեշվերէթ օրաթերթին մէջ⁽¹⁵³⁾, միասին առնելով գերման Եոհաննէս Լեփսիուսի, անգլիացի ձէյմս Պրայսի, եւ վերջին տասնամեակին լոյսին բերուած օսմանեան եւ այլ փաստաթուղթերու հաւաքածոները՝ աւելի՛ քան բաւ պիտի ըլլան յայտարարելու ներկայ եւ անցեալ, եւ թուրք ու օտար բոլոր, բոլո՛ր քաղաքագէտներուն եւ պատմաբաններուն, թէ եղածին ուրացումը չէ որ պիտի չքացնէ զայն, պատահածին մերժումը չէ որ անիրական ընծայէ դէպքը, եւ հրաշքով մը այդ ուրացումն ու մերժումը անգոյ ընծայեն Հաւաքականութիւն մը որ կար երէկ եւ շկայ այսօր, եւ որուն օսկերտտիքը կը մնայ ակերբուն վրան Մոփաց Աշխարհի Կէօլճիք լիճին, եւ Հողին ու աւազին ներքեւ զայն շրջակալող ձորերուն, վիհերուն եւ հովիտներուն: Փա՞ստն այս բոլորին. սակայն կարդացէք Սուզան Գ. Պլէսի հրատարակութեան տուած այս գործը, ու եթէ կարողանաք՝ Հարց մի՛ տաք, թէ ե՞րբ պիտի լոյսին գան Հեռագիրներն ու տեղեկագիրները ամերիկեան այլ հիւպատոսներուն, ինչպէս նաեւ անոնք՝ որոնք գրուեցան ու առաքուեցան ամերիկացի եւ այլ ժողովուրդներու պատկանող այն միսիոնարներուն կողմէ, ո-

բունք տեղափոխուած մնացին Օսմանեան Կայսրութեան Խարբերդ, Սեբաստիա, Մարտին, Վան եւ Բաղէշ քաղաքներուն մէջ: Անոնք կ'ան, սակայն պիտի տրուի՞ն լոյսին: Ո՞վ գիտէ:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Ջ. Ա. Կիրակոսեան [խմբ.], *Հայաստանը Միջազգային Դիւանագիտութեան եւ Սովետական Արտաքին Քաղաքականութեան Փաստաթղթերում*, 1828-1923, Երևան, 1972, էջ 752-753:
2. Այս մասին տես՝ Vahakn N. Dadrian, «The Naim-Andonian documents on the World War I of Ottoman Armenians: The anatomy of a genocide», *International Journal of Middle East Studies*, vol. 18, N° 3, August, 1986, p. 347, եւ Leslie A. Davis, *The Slaughterhouse Province: An American Diplomat's Report on the Armenian Genocide, 1915-1917*, New Rochelle / New York, 1990, pp. 23-24.
3. *Զարթոնք*, 14 Սեպտեմբեր 1986, էջ 2:
4. Լեսլի Ա. Տէյվիսի գործը, որ կը բաղկանար մեքենագիր 132 էջէ՝ գրուեցաւ Միացեալ Նահանգներու վարչապետութեան հիւպատոսական գրասենեակի տնօրէն Ռիլպըր ձ. Քարրի պահանջով, եւ առաջին անգամ հրատարակուեցաւ 1989-ին: Տես՝ Leslie A. Davis, *The Slaughterhouse Province: An American Diplomat's Report on the Armenian Genocide, 1915-1917*, Edited with an introduction and notes by Susan K. Blair, Aristide D. Caratgas, Publisher, New Rochelle / New York, 1989, 216 pages. Ins. Appendix A: Consular Dispatches by Leslie A. Davis, pp. 143-184; Appendix B: Official Proclamation-Original Text and United States State Department Translation, pp. 187-190, Appendix C: Extracts from Ottoman Government Publications, pp. 193-194; [Appendix D]: American Citizens in Harput Consular District as of December 18, 1914, pp. 199-200; Appendix E: Photographs Taken by Leslie A. Davis, 1915, [pp. 203-209]; [Appendix F.]: Two Maps: [a], War Office Map — Harput Area, [1938] and [b], Harput Area, 1897, [pp. 210-211]: Տէյվիսի գործն ունեցաւ իր երկրորդ հրատարակութիւնը 1990-ին, եւ գոր կ'օգտագործենք հոս:
5. Յաջորդաբար՝ անգլիական դերհիւպատոս Թովմաս Գ. Մկրտիչեան, գերման հիւպատոսներ նախ՝ Տֆ. Շուարձ եւ ապա՝ Ֆոն Շեպպեր-Րիխթեր, Հալեպի ամերիկեան հիւպատոս ձեռքի ձեռնարկ, եւ Տրապիզոնի ամերիկեան հիւպատոս Օսթրը Հայգեր:
6. Հստ Պլեռի՝ Տէյվիս Խարբերդի նահանգին հայերու բիւր նախ տուեր էր հարիւր հազար, սակայն յետագային Միացեալ Նահանգներու Պետական Քարտուղարութեան յլած 26 Փետրուար 1918 բուակիր նամակով մը գայն կը սրբագրէր ու կը վերածէր հարիւր յիսուն հազարի: Տես՝ Davis, p. 132: Իր կարգին, սակայն, Լեփսիուս կը գրէր 1916-ին թէ «Խարբերդի նահանգը կը հաշուէր 575,300 բնակիչի վրայ՝ 174,000 քրիստոնեայ, որմէ 168,000-ը հայեր, 5000-ը աւորիներ, եւ 1000-ը յոյներ:

- «Մահմեդական բնակչությունը կը բաղկանայ 180,000 շիա գզրիպաներ, 95,000 ֆիւթսերէ (75,000 մստակեաց եւ 20,000 վաչկատուն) եւ 128,300 բուրֆերէ»: Տես՝ Dr. Johannes Lepsius, **Rapport sur la situation du peuple arménien en Turquie**, Potsdam, 1916, p. 78. ասկէ ետք կը Յշուի որպէս Rapport: Տես նաեւ *Գազանի Տեղեկագիր Տորթ. Եռանկէս Լեփսիուսի — Հայաստանի Զարդեր*, [Միջալէլ Շամտաննեան, թրգմ.], Պէյրութ, 1965, էջ 70:
7. Davis, p. 39.
 8. Հետաքրքրական է, սակայն, որ այս հեֆիաքը կրկնեցին ո՛չ միայն բուրֆ իշխանութիւններն ու կամակատար բուրֆ պատմաբանները՝ այլ նաեւ քրքական դրամով գնուած կարգ մը արեւմտեան պատմաբաններ, որոնցմէ քանի մը օրինակի համար տես՝ Philips Price, **A History of Turkey**, London, 1956, p. 91. Clair Price, **The Rebirth of Turkey**, New York, 1923, pp. 86-87. Philip Zora, **Mustafa Kemal, dictateur**, Paris, 1936, p. 159-160:
 9. Այս մասին տես՝ **Verité sur le mouvement révolutionnaire arménien et les mesures gouvernementales**, Constantinople, 1916, p. 10 et 15:
 10. Այս մասին տես՝ Լեւոն Վարդան, *Թո՛ղ Թուրքը Նստի*, Պէյրութ, 1975, էջ 44-46, 65-69:
 11. Այս մասին տես՝ Kâmurân Gürün, **Ermeni Dosyası**, Ankara, 1985, s. 223-224: Լեւոն Վարդան, «Հայկական բողոքածրար», *Շիրակ*, Լ՛Ի տարի, թիւ 3-5, Մարտ-Մայիս, 1990, էջ 26-27: Ասկէ ետք կը Յշուի որպէս «Հայկական բողոքածրար»: Տես նաեւ Լեւոն Վարդան, «Ակամայ պատասխան», *Զարթօնք*, 3 Օգոստոս 1979, էջ 3, եւ Dr. Salahi R. Sonyel, **Displacement of the Armenians: Documents — Le Déplacement des populations arméniens: Documents — Ermeni Tehciri ve Belgeler**, Ankara, 1978, preface — préface — önsöz յաջորդաբար:
 12. Այս մասին տես՝ Sinasi Orel, Sureyya Yuca, **Ermenilerce Talat Pasaya Atfedilen Telegramların Gerçek Yüzü**, Ankara, 1983, Türkkiye Ataöv, **The Andonian Documents Attributed to Talat Pasha Are Forgeries**, Ankara, 1984. Sinasi Orel, «The facts behind the telegrams attributed to Talat Pasha by the Armenians», **Turkish Review Quarterly Digest**, Winter, (1985-86), pp. 83-102: Տես նաեւ Daderian, pp. 311-360:
 13. Օսմանեան Կայսրութեան հրատարակած Verité-ն օտար պետութիւններուն բաշխուեցաւ 1 Մարտ 1916-ին, որմէ հետուած մը կ'ստեղծուի այս հարցին եւ որուն անգլիերէն մէկ բարգամուտեանը համար տես՝ Davis, p. 194:
 14. Viscount Bryce, **The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-16**, second edition, Beirut, 1972, p. 258.
 15. Davis, p. 58.
 16. Նոյն, էջ 57:
 17. Նոյն, էջ 59: Բաղդաստէ՝ Bryce, pp. 260-261:
 18. Davis, p. 45.
 19. Նոյն, էջ 47: 'Իւպֆերուն ակամատես մը, սակայն, կը յայտնէ թէ «վարիչ մարմինները, Ամերիկեան Միսիոնարութիւնը կրկնակի դիմումներ ըրին, սակայն արդիւնքը թուրքովին պարապ յսող չեղաւ...»: Տես՝ Արտն Ռաշիկեան, «Դրութեան ակամատես շարքը Ռարբերդի մէջ», *Շիրակ*, Լ՛Ի տարի, թիւ 3-5, Մարտ-Մայիս, 1990, էջ 101:
 20. Bryce, p. 259.
 21. Davis, p. 48.
 22. Մենք օգտագործեցինք Հայկ Արամեանի բարգամուտութիւնը գերմաներէնէն, որ ունի կարգ մը բացթողումներ էհմանի հեռագիրէն: Այդ վերջինին համար տես՝

- Dr. Johannes Lepsius, *Deutschland und Armenien, 1914-1918*, Bremen, 1986, s. 61-62.
 ասկէ ետք կը նշուի որպէս **Deutschland**.
23. Գերսաւ Ահարոնեան, *Յուշմատեան Մեծ Եղեռնի*, Պէյրուս, 1965, էջ 393:
 24. Մարիա Ճէյքըպըն (Յագոպըն), *Օրագրութիւն*, 1907-1919, Խարքերդ, ԱՅ-բիլիսա, 1979, էջ 92-93:
 25. Davis, p. 51.
 26. *Քեզազուի*՝ ժամտաշուր:
 27. Խաչիկեան, էջ 101:
 28. Davis, p. 143.
 29. Նոյն, էջ 51-52:
 30. Նոյն, էջ 143:
 31. Խաչիկեան, էջ 102:
 32. Bryce, p. 259.
 33. Պիտի ըլլայ՝ Արդամա:
 34. Arthur Beylerian, *Les Grandes Puissances, l'Empire Ottoman et les Arméniens dans les Archives Françaises (1914-1918)*, Paris, 1983, p. 130.
 35. Յովհաննէս Արք. Նազլեանի *Յուշերը*, Պէյրուս, 1960, էջ 294:
 36. *Deutschland*, s. 86.
 37. Այսինքն՝ Խարքերդէն:
 38. *Քաղվիտ-ի Վեղայի*, թիւ 3771, էջ 48 ա. ա:
 39. Նազլեան, էջ 301:
 40. Gürün, s. 200. Տես նաեւ՝ Լեւոն Վարդան, «Հայկական թղթածրար», էջ 45:
 41. Davis, pp. 52, 144.
 42. Նոյն, էջ 52:
 43. *Deutschland*, s. 95.
 44. Davis, p. 54.
 45. Այս հիմն ինքնուրու էին Մամուրէթ իւլ-Ազիզի Գերման Բողոքական Առաքելութեան որբանոց-գարոցի տնօրէն Եռեաննէս Էմմանը, Մամուրէթ իւլ-Ազիզի Օսմանեան Դրամատան աւստրիացի փոխտնօրէն Փարլ Բիչչոքթոնը, ամերիկացի միսիոնարներ Էննրի Էնրիսըն Բիկզը, էրմեստ Ուիլսըն Բիկզը եւ Տէ. Էննրի Էնրալըրը էքֆիսընը:
 46. Davis, p. 41: Իր կարգին Յագոպըն կը գրէ թէ՛ վայիմ... շատ գէշ մարդ մըն է եւ ինք պատճառն է այս շատ գարշելի ու սուկայի դէպքերուն, որոնք հոս պատահեցան»: Տես՝ Ճէյքըպըն, էջ 124:
 47. *Deutschland*, s. 90.
 48. Ահարոնեան, էջ 394:
 49. Davis, p. 59.
 50. Ըստ քրիստոնեական արխիւներու մէջ պահուած եւ Պրաչսի հրատարակած *Կապուտ Գրքի* վերաբերող բանալիներու տուեալներուն՝ Պրաչսի տուած այս թիւ 66 փաստաթուղթը կու գայ Տէյվիսէն, իսկ «հեղինակը հաւանաբար անդամներէն մէկն է կարաւանի»: Տես՝ Bryce, «Key to names...», [յաւելուած], p. 12:
 51. Bryce, p. 265.
 52. Davis, pp. 59-60.
 53. Նոյն, էջ 60:
 54. Ըստ Ֆրանսայի արտաքին գործերու նախարարին յանձնուած անբուսկիր յուշագրի մը՝ չէզոք ականատես կիմ վկայ մը կը պատմէ թէ Կարիմէն տեղահանուած կիներ բանի մը օր ճգուեր էին Խարքերդի դաշտին մէջ, ուր բոլորն ալ մեռան անօրութենէ (օրական 50-60) եւ իշխանութիւնը դրկեր էր բանի մը մարդ գա-

- նոնք թաղելու համար՝ «մահմետական ժողովուրդին առողջութիւնը պահպանելու համար»։ Sbu' Beylerian, p. 152:
55. Davis, pp. 150-151.
56. Կարնեցիներու այս կարաւանին մասին մանրամասն տես՝ Լեւոն Վարդան, «Կարինը եւ շրջակայքի տեղահանութիւնն ու ջարդը», Ահարոնեան, էջ 450-455:
57. *Deutschland*, s. 80.
58. Davis, pp. 60-61.
59. Ամերիկեան Եփրատ Գուլէնը:
60. Մեզիրէի ֆրանսական վարժարանը, որ ենթակայ էր Լիոնի Վիճակին: Նախապէս կը պատկանէր ֆախուսէններու, եւ առ այդ՝ ենթակայ էր Խտալական Վիճակին:
61. Ազգային Կեդրոնական Վարժարան:
62. Bryce, p. 268.
63. Նազլեան, էջ 293-294:
64. 26 Դեկտեմբեր 1915-ին:
65. Մտտ 92 մերթ:
66. Davis, pp. 94-95.
67. Նոյն, էջ 80:
68. Նոյն, էջ 150:
69. Նոյն, էջ 93-94:
70. Նոյն, էջ 82-83:
71. Նոյն, էջ 152:
72. Նոյն, էջ 83:
73. Ճէյքըպըն, էջ 108-109:
74. Davis, p. 62.
75. Ահարոնեան, էջ 394:
76. Bryce, p. 260.
77. Այս մասին տես՝ *Réponse au memoire de la Sublime Porte en date du 12 Février 1919*, Constantinople, 1919, p. 4-5. U.S.A. Department of State, Foreign Relations of the United States, 1915, *Supplement*, Washington, 1928, p. 981. Great Britain, Foreign Office, 371/2488/9312.
78. *Deutschland*, s. 76-77.
79. Davis, p. 64.
80. Նոյն, էջ 169:
81. Ճէյքըպըն, էջ 137:
82. Bryce, p. 260. Իսկ Խարբերդի Գեղվամբ գիւղին մէջ Երիտասարդ-Քուրթ Կուսակցութեան անդամ մը՝ Հասանը՝ հաւաքել տուաւ յորս հազար մանչեր որբանոցի մը մէջ եւ ապա, 1918-ի զինադադարէն անմիջապէս առաջ բոլորն ալ խեղդել տուաւ Քիւրտ-Յմիկ կոչուած կամուրջին տակ՝ իր աչքին առջեւ: Sbu' Նազլեան, էջ 328:
83. Gürün, s. 221. Sbu մասի՝ «Հայկական թղթածրար», էջ 46-47:
84. Davis, p. 53.
85. Այս մասին տես՝ Kâzım Karabekir, *İstiklal Harbimiz*, İstanbul, 1960, s. 387 եւ 397:
86. Դարերու ընթացքին հայերէն ոճանց թրփացումին մասին տես Գ. Ամատունի, *Դարերու Ընթացքին Քրթացած Հայեր*, Քրթացած Հայեր, Պէյրութ, 1980, իսկ Հայկական Տասնհինգի օրերուն թրփացումի եւ իսլամացումի մասին տես՝ *Rapport*, p. 281-288.
87. Davis, p. 69.

88. Deutschland, s. 61-62, 90, 153.
89. Նոյն, էջ 74, 86, 205-206:
90. Ահարոնեան, էջ 393-396:
91. Տէր Զօր:
92. Beyerian, p. 47.
93. Նոյն, էջ 151:
94. Նոյն, էջ 65:
95. Այցելութիւնը տեղի ունեցաւ 20 Հոկտեմբեր 1915-ին զուգահիսոյ Ղուրպան Պայրամբին առիթով:
96. Այսինքն՝ Ոսմակը:
97. Davis, pp. 72-73.
98. Նոյն, էջ 73:
99. Նոյն, էջ 157:
100. Նոյն, էջ 169:
101. Ճէյքըզըն, էջ 115:
102. Նազիբեան, էջ 301:
103. Նոյն, էջ 302:
104. Ճէյքըզըն, էջ 116:
105. Նոյն, էջ 48:
106. Նոյն, էջ 121:
107. Նոյն, էջ 122:
108. Նոյն, էջ 123:
109. Նազիբեան, էջ 307:
110. Ճէյքըզըն, էջ 125: Հայր Լուի կը յայտնէ թէ ածխացած դիակները մետուեցան գերեզմանատունը փոսի մը մէջ: Տես՝ Նազիբեան, էջ 308:
111. Ճէյքըզըն, էջ 127:
112. Նոյն:
113. Նազիբեան, էջ 308:
114. Կակմարկուի Մամուրէր իւլ-Ազիզի ամերիկեան հիւպատոս Լեսլի Մ. Տէյվիսին:
115. Թլկատին:
116. Ճէյքըզըն, էջ 128-129:
117. Բառացի՝ փոխառաւարիչ: Հոս՝ կուսակալ Սայիպ Պէյ:
118. Ճէյքըզըն, էջ 131:
119. Նազիբեան, էջ 309:
120. Ճէյքըզըն, էջ 133:
121. Նոնաննէս Էմանի անօրինութեան տակ գտնուող գերմանական որբանոցը հազիւ թէ ունէր հինգէն վեց հարիւր որբ:
122. Ճէյքըզըն, էջ 135:
123. Նոյն, էջ 137:
124. Նոյն:
125. Նոյն:
126. Նոյն:
127. Քաղաքացիներէ եւ ոչ-զինուորականներէ կազմուած բրբական անկանոն բանակ:
128. Ճէյքըզըն, էջ 140:
129. Նոյն, էջ 146-147:
130. Նոյն, էջ 150:
131. Նոյն:

132. Նոյն, էջ 153: Այս մասին տես Տիկ. էր Բինսընի վկայությունը ամերիկեան իշխանութիւններուն: Davis, p. 31:
133. Ճէյքըպըն, 157:
134. Նոյն, էջ 159:
135. Նազլեան, էջ 312:
136. Նոյն:
137. Ճէյքըպըն, էջ 161:
138. Նազլեան, էջ 312:
139. Նոյն:
140. Davis, p. 90.
141. Նոյն, էջ 96:
142. Նոյն:
143. Նոյն, էջ 182:
144. Նոյն, էջ 175:
145. Նոյն, էջ 181:
146. Նոյն, էջ 124:
147. Նոյն, էջ 184:
148. Նոյն, էջ 117:
149. Ըստ Նազլեան Արքեպիսկոպոսին՝ 3 Յունուար 1916-ին Իսմէլ կը գտնուէր Մեզիրէ, եւ առ այդ՝ լաւապէս տեղեակ էր հոն եւ շրջապատին մէջ պատահած բռնութիւններէն: Տես՝ Նազլեան, էջ 314:
150. Davis, pp. 144-184.
151. Նոյն, էջ 203-209:
152. 13 Յունիս 1915:
153. Davis, pp. 187-188. Օսմանեան Կայսրութեան մէջ գաղթի ու տարագրութեան կարգ մը յայտարարութիւններուն համար տես՝ Լեւոն Վարդան, «Հայկական Տասնհինգը եւ օսմանեան պէտանամէներ», *Շիրակ*, ԻԳ. տարի, թիւ 4, Ապրիլ, 1980, էջ 38-48:

Լ. Վ.

«ՍՊԱՆԴԱՆՈՑ ՆԱՀԱՆԳԸ»⁽¹⁾

(Հատուած)

ԼԵՍԼԻ Ա. ՏԷՅՎԻՍ

[Էջ 79] Յաջորդ շարքաներուն այցելեցի բազմաթիւ այլ գիւղեր, որոնցմէ ոմանց բոլոր բնակիչներն ալ եղեր էին հայեր: Հայկական գիւղերն ալ աւերակ էին եւ լճուած՝ Պոզմաշէնի⁽²⁾ եւ Հուլաբէյի⁽³⁾ մման: Ուրիշներու մէջ դատարկ էին հայերուն բնակարանները: Ամայութիւն էր ամէնուրեք եւ աւերակ: Տունները փուլ կու գային, եւ քանդուեր էին եկեղեցիները, որոնք կառուցուած էին մեծ ծախսով եւ բազում զոհողութեամբ: Մերձակայ Եղեգի գիւղին մեծ զանգակը, որ հիւպատոսարանին միջոցով միայն վերջերս էր գնուեր Ամերիկայի մէջ եւ գետեղուեր իր տեղը՝ կը մնար [իմկած] եկեղեցիի աւերակոյտին մէջ: Կը թուի թէ իրենց մոլեռանդութեանը մէջ մահմետականները որոշեր էին ոչ միայն ոչնչացնել քրիստոնեայ բնակչութիւնը⁽⁴⁾, այլ նաեւ չֆացնել անոնց բոլոր հետքերը եւ նոյնիսկ քանդել քաղաքակրթութեան ամէն արտադրութիւն: Տխո՛ւր էր տեսնել բոլոր այս աւերածութիւնն ու քանդումը մէկուկէս տարի ետք [ալ]՝ երբ ձիով կը շրջագայէի լճուած այս գիւղերուն մէջ, եւ [ուր] տեսայ դատարկ բնակարաններ, որոնցմէ այդքան ամուսիններ ու գաւակներ մեկնէր էին Ամերիկա, ուր հիմա անտեղեակ էին նակատագիրէն իրենց ընտանիքներուն:

Իմ այցելած գիւղերուս մէջ կը գտնուէին Հիւսէյնիկը, Մորենիկը, Հարբուր Սերայը⁽⁵⁾, Վերին Մեզիրէն⁽⁶⁾, Քեսերիկը⁽⁷⁾, Եղեգին, Սուրսուրին⁽⁸⁾, Սուրսուրի վանքը, Թատեմը⁽⁹⁾, Հուլուն⁽¹⁰⁾, Շենթելէն⁽¹¹⁾, Կարմերիկ⁽¹²⁾, Գեղվանքը, Գայլուն, Վարդաթիւր, Փերչեննը⁽¹³⁾, Երբմենիկը⁽¹⁴⁾, Մորէյը, Գումքը, Հոդէն, Հապուսին, Հինձորը⁽¹⁵⁾, Հինագրակը⁽¹⁶⁾, Չերքենին, Վիսիանը, Քորփէն⁽¹⁷⁾, Յակոբ Մեզերէնը⁽¹⁸⁾, Ծառուկը, Հարսեկը⁽¹⁹⁾ եւ Բերդակը: Տաղտկալի պիտի ըլլար մանրամասն բացատրութիւն տալ իւրաքանչիւրին մասին, որովհետեւ տեսարանը նոյնն էր ամէն տեղ: Անոնցմէ շատերն այցելեցի բազմաթիւ անգամներ, եւ Պետական [Քարտուղարութեան] եւ Դեսպանութեան⁽²⁰⁾ հարցապնդումներ

ստացայ անոնց բնակիչներէն հազարաւորներու մասին: Անշուշտ ծանօթ էր որ գիւղական շրջաններու մէջ ձիով շրջելու սովորութիւնն ունէի, եւ այդ աշնան, օր մը, ոստիկանապետն իր գրասենեակը կանչեց այն երիտասարդը⁽²¹⁾ որ յանախ կ'ընկերանար ինձի: Անիկա դատապարտեց զայն հիւպատոսին հետ հայկական գիւղերն այցելելուն համար, խորհուրդ տուաւ որ սպագային չերթար, եւ ազդարարեց որ լաւ բան չէր այդպէս ընել: Նոյնհետայն երիտասարդը խօսեցաւ ինձի այս ազդարարութեան մասին, սակայն կարեւորութիւն չտուի անոր:

Ձիով պտոյտներուս ամենէն հետաքրքրականներն էին անոնք գորոնք կատարեցի դէպի Կէօյնիւի լիճը⁽²²⁾, որ կը գտնուէր Մամուրէր իւլ-Ազիզէն մօտ հինգ ժամ հեռաւորութեան մը վրայ: Ուզեցի իննել նակատագիրն այն մարդերուն, որոնք առաժուծ էին հոն, եւ ինչպէս որ կ'ըսուէր՝ անոնցմէ շատեր սպաննուէր էին քաղաքէն քչիկ մը անդին: Կատարեցի քանի մը շրջապտոյտ՝ առանց անոնցմէ որեւէ հետք գտնելու: Ի վերջոյ՝ բուրբ մը յայտնեց ինձի մեծ գաղտնապահութեամբ՝ թէ ինք տեսած էր հազարաւոր դիակներ Կէօյնիւի լիճին շրջակայքը, եւ առաջարկեց ինձի զիս առաջնորդել անոնց գտնուած վայրը:

Սեպտեմբերի սկիզբները օր մը նամբայ ելանք առաւօտեան ժամը չորսին: Առինք Տիգրանակերտի նամբան ու փորձեցինք մեկնիլ [էջ 80] աննշմար կերպով: Մեռած դիակներ կային նոյնիսկ քաղաքի փէշերուն եւ անոնց⁽²³⁾ հանդիպեցանք ամբողջ նամբու ընթացքին: Փոխանակ բաղուած ըլլալու՝ անոնք ծածկուած էին քանի մը թիւղով, որովհետեւ ոստիկան-գիւնուորներն աւելի դիրքին էին գտեր ընել այդպէս՝ քան թէ փոս մը փորել անոնց համար: Արդիւնքն այն էր որ, գրեթէ բոլոր պարագաներու տակ ալ, մարդ կրնար տեսնել գետինէն դուրս ցցուած թեւեր եւ սրունքներ, եւ նոյնիսկ՝ գլուխներ:

Մոլլաֆէօյէն ձգեցինք նամբան եւ դաշտագետինին վրայով ուղղութեանք դէպի լիճը: Դաշտագետինին վրան ցրուած կային քանի մը հարիւր դիակներ, [որոնց] մօտաւորապէս բոլորն ալ կիներ էին եւ մանուկներ: Յստակ էր, որ սպաննուած էին, որովհետեւ այսքան մեծ թիւով չէին կրնար մահանալ հիւանդութենէ կամ սպառումէ: Անոնք կը գտնուէին քաւական մօտիկը քրտական գիւղի մը որ ծանօթ էր Քիւրտեմլիի անունով. յետագային լսեցի թէ այս գիւղին քիւրտերն էին որ սպաննուէր էին մեծամասնութիւնը այս մարդոց: Հուշույցն կին մը քացատրեց ջարդն ինձի: [Իր] գիւղին միւս բնակիչներուն հետ [ինքն ալ] թերուէր էր հոն եւ [առ այդ՝] տեսաւ սպանութիւնն անոնց մեծ մասին: Քիւրտերը հարուած մը տուին իրեն [ալ] եւ որպէս մեռած՝ ձգեցին գիւնք: Քանի մը ժամ մնաց մեռած մարմիննե-

րուն մէջ եւ փախուստ տուաւ գիշերը: Յետագային ինչ մը դրամ տուի իրեն որպէսզի անով փախուստ տար Ռուսիա, ուր ապահով է հիմա: Ուրիշ մէկը որ ինձի խօսեցաւ այս վայրին մասին՝ Տրապիզոնէն երիտասարդ կին մըն էր: Քիւրտերն սպաններ էին իր մայրը եւ եղբայրը, իսկ անոնցմէ մէկը, որ Մեհմէտ աղա կը կոչուէր՝ տարեր էր զինք: Քանի մը ամիս պահուեր էր Քիւրտեմլիքի մէջ. [բայց] ի վերջոյ կարողացեր էր փախուստ տալ եւ գալ Մամուրէք իւլ-Ազիզ:

Մեր տեսած մարմիններէն ոմանք հրկիզուած էին: Նախ խորհեցայ թէ այս մէկը կատարուեր էր որպէս առողջապահական միջոցառում, թէպէտեւ Քիւրտերը հազիւ թէ մտածեն այսպիսի բաներու մասին: սակայն ըսուեցաւ ինձի թէ անոնք հրկիզուել էին այս մարմինները փնտոյնու համար որքեւ ոսկի գոր մարդիկ⁽²⁴⁾ կրնային կլլած ըլլալ: Յետագային տեսայ բազմաթիւ ուրիշներ [ալ]՝ որոնք հրկիզուած էին նոյն նպատակով, եւ իմացայ որ երբ տարագրուող անձերը ենթարկուէին յարձակումի՝ յաճախ կը կլլէին իրենց ոսկին՝ գայն ազատելու համար:

Քիւրտերու գիւղը ձգելէ ետք մագլցեցանք շատ ցից լեռ մը եւ ապա իջանք Կէօլնիւք լիճին [հայող] ձոր մը, ուր իմ նախորդներս եւ ամերիկացի միսիոնարներ սովոր էին ամէն ամառ բանակելու: Կարեւոր չէ ըսել թէ այն երեք տարիներուն երբ Խարբերդ էի՝ առիթ մը չեղաւ բանակելու: Երկու դիակներ կը գտնուէին ափին վրայ ճի'շտ հոն, ուր անոնք⁽²⁵⁾ կը լարէին իրենց վրանները:

Ապա դարձանք դէպի հիւսիս եւ մօտ երկու ժամ ձիավարեցինք լիճի ափին: Այս հեռաւորութեան ամբողջ երկայնքին լիճին ափերը բարձր են եւ ցից, մինչ բազմաթիւ տեղեր կան խոր ձորեր՝ գրեթէ գրպանի մը պէս: Դիակներ կային այս ձորերէն շատերուն մէջ եւ ժայռերու գագաթներէն՝ որոնք կը ցցուէին անոնց միջեւ՝ տեսանք հարիւրաւոր մարմիններ եւ բազմաթիւ ոսկորներ վարի ջուրին մէջ: Կ'ըսուէր [էջ 81] թէ ոստիկան-գիւնուորներու հոս բերած բազմաթիւ մարդերէն շատերը վար հրուեցան ժայռերուն վրայէն եւ այդ ձեւով սպաննուեցան: Մեր տեսածն ամբողջութեամբ կը հաստատէր զրոյցը: Ձորերէն ոմանց մէջ կային միայն էանի մը մարմիններ, մինչ ուրիշներու մէջ՝ հազարէ աւելի [էին անոնք]: Մեր տեսած դիակներէն մէկը կը պատկանէր սպիտակամօրուս ծերունիի մը, որուն գանկը խորտակուած էր մեծկակ էարով մը, որ տակաւին կը մնար անոր մէջ: Քշիկ մը անդին տեսանք անիւնները վեց կամ ութը մարդու, լոկ էանի մը կտոր ոսկոր եւ զգեստ, որոնք մնացեր էին առանց այրելու: Տեսանելի էր կարմիր ֆէս⁽²⁶⁾ մը: Կային նաեւ գանկի էանի մը ոսկորներ, որովհետեւ անոնք ամենէն դիմացկունն են եւ մի'շտ վերջինը՝ էայտայուելու մէջ: Այս անիւնները կը գտնուէին ծառէ մը մօտա-

ւորապէս քսան ոսնաչափ⁽²⁷⁾ հեռու, որուն ներքեւ կար կարմիր [ու] մեծկակ տեղ մը: Աւելի մօտէն կատարուած քննութիւն մը հաստատեց թէ արիւն էր այս մէկը, եւ կը թուէր թէ հոն էր երկու կամ երեք շաքարէ ի վեր: Ծառն ունէր որոշ թիւ մը փամփուշտի ծակերու, որոնք ցոյց կու տային թէ մարդերը, որոնց անիւնները տեսանք՝ հաւանաբար կեցուցեր էին անոր առջեւ եւ հրացանագարկ ըրեր:

Անկէ անմիջապէս ետք հասանք ձոր մը, ուր կային քանի մը հարիւր մեռած մարմիններ⁽²⁸⁾: Անոնց գոյութեան տեղեակ էինք զանոնք տեսնել տառչ իսկ: Երբ մօտեցանք ձորին՝ ժայռերու գագաթէն տեսանք քսանէն երեսուն գլուխներու շարք մը, որ դուրս էր ցցուել ջրեզրի աւազէն: Կը տեսնուէին միայն մարմիններուն գլուխները: Ահռելի էր անոնց տեսքը: Կը թուէր թէ թաղուած էին, եւ իմացայ որ այդպէս էր իրականութիւնն ալ, սակայն ոստիկան-զինուորներն [իրենց] թրական բնորոշ անհոգութեամբ՝ մարմինները թաղեր էին լճափի աւազին մէջ, որովհետեւ աւելի դիւրին էր փորել այդ մէկը, եւ աւազը էջուեր էր ջուրէն՝ տեսանելի ընծայելով գլուխները: Ժայռերու ստորոտին իրարու վրայ դիգուած կային բազմաթիւ դիակներ: Անոնցմէ ոմանք ջուրին մէջ էին, մինչ ուրիշներ՝ անկէ դուրս: Երբ դարձանք դէպի ձորը՝ անոր երկու լանջերուն տեսանք բազմաթիւ ուրիշներ, որոնք պառկել էին իրարու թով: Զորին կեդրոնը կար պուրակ մը փոքր ծառերու եւ թուփերու. անոնք ծածկուել էին որթատունկերով, որոնք բնական բուսականութիւն մըն են [հոս]: Թուրք ընկերակիցս տարաւ զիս հոն եւ ուզեց որ նայէի անկէ ներս: Ծառերուն ներքեւ կային տասնէն քսան մարմիններ, որոնցմէ ոմանք իրենց մեռնելու պահին մնացել էին կանգուն՝ իրենց նստած վիճակին մէջ: Ընկերակիցս ըստ թէ հիւանդ կամ վիրաւոր մարդեր էին անոնք, որոնք հոն ձգուել էին որ մահանային, թէ շաքար մը առաջ ինք անցել էր անկէ եւ ողջ էին անոնցմէ ոմանք, եւ թէ այն ատեն հաց էր տուել անոնցմէ ոմանց:

Մեր անցած այս ձորերէն շատերուն մէջ հոս-հոն կային լճափի աւազէն դուրս ցցուած գլուխներ եւ անթաղ մարմիններ: Պատահական մարմին մը փնտռել էր եւ ուռած, մինչ ուրիշներ սկսած էին թնթռկիլ: Գրեթէ բոլոր ձորերուն մէջ ալ կար քանի մը մարմին, իսկ ոմանց մէջ հարիւրներով: Մէկ հասն ունէր գրեթէ հազարի մօտ, ուրիշ մը, ըստ ենթադրութեանս, հազար հինգ հարիւրէ աւելի: Սակայն անոնց գարշահոտն այդքան էր [էջ 82] ծանր⁽²⁹⁾՝ որ թէպէտեւ փորձեցի երբայ ձորի ծայրամասի բարձունքին՝ չկարողացայ այն ատեն: Աւելի լաւ խուզարկեցի գայն ամիս մը ետք: Եռանկիւնաձիւ այս ձորը, ինչպէս բազմաթիւ ուրիշներ, [իր] երկու ափերէն փակ էր գա-

հավեժ կողերով, ուրկէ մարդիկ անկարող էին մագլցիլ իրենց յար-
 ձակումի ենթարկուելու պարագային: Իւրաքանչիւր ասի վրայ գե-
 տեղուած երկու կամ երեք ոստիկան-գիմուոր կրնային արգիլել բազ-
 մութիւն մը այդ ուղղութեամբ փախուստ տալէ: Շատ մը մարմիններ
 խցուած կը մնային ձորի հեռաւորագոյն ծայրամասի ժայռերուն մի-
 ջել, եւ ցոյց կու տային թէ հայերէն ոմանք ի գուր էին փորձեր վեր-
 բարձրանալ եւ սպաննուեր՝ իրենց փախուստի պահին: [Ձորի] եր-
 բորդ կողմը կը գտնուէր ջուրը: Ձորի լայնքին⁽³⁰⁾ տասնհինգ կամ
 քսան ոստիկան-գիմուորներու շարք մը կրնար արգիլել ժողովուրդը
 դէպի ջուրը խոյս տալէ, կամ ալ վագելէ այն նեղ ուղիէն, որ ձորի եր-
 կու կողմէն կը տանէր դէպի լիւնը: Այս ձեւով գոհերն արգելափակ-
 ուեր էին բառացի կերպով եւ սպաննուեր՝ պաղարիւն կերպով: Մար-
 մինները դիզուեր էին իրարու վրայ, եւ կը թուի թէ հոն էին երկու
 [կամ] երեք շարքէ ի վեր: Այս մէկը հաստատեց ծեր ֆիւրս մը, գոր-
 տեսանք աշխատանքի վրայ՝ ձորը վերէն դիտող ֆրտական գիւղի մը
 մօտ: Կեցանք ու հարց տուինք անոր թէ ի՞նչ էր պատահեր հոն: Անի-
 կա պատմեց մեզի թէ քսան օր առաջ ոստիկան-գիմուորները հոն բե-
 րեր էին երկու հազարի չափ հայերէ բաղկացած խումբ մը եւ մօտա-
 կայ գիւղերու ֆիւրտերն ստիպած որ սպաննէին զանոնք: Այս [մէկը]
 կը համբկնէր գաղթականներու այն մեծ խումբին որուն անցքը Մա-
 մուրէթ իւլ-Ազիզէն տեսեր էի երկու շարք առաջ⁽³¹⁾: Քիւրտը
 պժգանեով արտայայտուեցաւ պատահարին մասին՝ երբ ըսաւ թէ ա-
 նոնց⁽³²⁾ մեռած մարմիններուն գարշահոտը շատ անտանելի էր իրեն
 եւ գիւղի միւս բնակիչներուն համար: Իրականութիւնն այն էր որ այս
 ամբան եւ աշնան ընթացքին շրջակայքի ֆիւրտերը մեռան հիւանդու-
 րեանէ՝ որպէս հետեւանք իրենց շրջապատին մէջ գտնուող ապառողջ
 պայմաններուն: Տարօրինակ է որ չմեռան անոնց բոլորն ալ:

Յետագային աւելի մանրամասն տեղեկութիւն տրուեցաւ ինձի
 հայերու այս խումբերը չ'աջցնելու դրութեան մասին: Անոնց կ'ար-
 տօնուէր օր մը կամ երկու տեղաւորուիլ ձորերուն մէջ կամ յարմար
 վայր մը: Երբ հոն էին անոնք՝ ոստիկան-գիմուորները կը հրաւիրէին
 ֆիւրտերը, ինչպէս որ պատմեց մեզի այս ծեր մարդը, եւ կը հրա-
 հանգէին անոնց սպաննել հայերը՝ ֆիւրտերուն ըսելով թէ այս կեր-
 պով կրնային դրամ շինել, սակայն կրնային դժուարութիւններու
 հանդիպիլ՝ եթէ մերժէին: Ապա կը կայանար համաձայնութիւն մը,
 որուն համաձայն ֆիւրտերը պիտի վճարէին որոշ գումար մը ոստի-
 կան-գիմուորներուն — քանի մը հարիւր ոսկի կամ աւելի՝ ըստ սա-
 կարկութեան — եւ իրենց պիտի պահէին այն ինչ որ այդ գումարէն
 աւելի գտնէին հայերու մարմիններուն վրայ: Այս րացատրութիւնն

իմացայ քանի մը անգամ ու կը կարծեմ թէ այսպիսի դրուժին մը ընդհանրապէս օգտագործուեցաւ այդ շրջանին մէջ եւ թերեւս Թուրքիոյ այլ կողմերն ալ:

Մեր տեսած մարմիններուն վրան գտնուող յատկանշական քանն ա՛յն էր, որ մերկ էին անոնց գրեթէ բոլորն ալ: Ինծի ըսին թէ կը ստիպէին ժողովուրդը հանել իրենց զգեստները՝ անոնց սպանութենէն առաջ, որովհետեւ մահմետականները պիտի կը սեպեն մեռած մարմինէ մը հանուած հագուստները: [էջ 83] Մարմիններէն շատեր ունէին երախարաց վերեր՝ ընդհանրապէս փոքր կամ կուրծքին [ու] մերք [ալ]՝ կոկորդին վրայ: Հրացանագարկ էին եղած սակաւաքիւ մարդեր, որովհետեւ շատ մեծ արժէք ունէին փամփուշտները: Աւելի աժան էր սպաննել սուրով կամ դանակով: Յատկանշական այլ քանն այն էր, որ գրեթէ բոլոր կիներն ալ պտակեր էին իրենց կոնակին վրայ եւ ցոյց կու տային քարքարոս հաշմումը ոստիկան-զինուորներու սուրբրուն, շատ մը պարագաներու՝ այս վերերը կիներուն տրուեր էին անոնց մահէն ետք⁽³³⁾: Նկատեցինք նաեւ որ այս ձորերուն մէջ գտնուող բոլոր մարմիններն ալ կը պատկանէին անոնց որոնք նամբու վրան էին առնուազն մէկ կամ երկու ամիսէ ի վեր եւ ցոյց կու տային որ Խարբերդէն չէին, այլ՝ հեռաւոր վայրերէ:

Զգելով լիեր՝ այլ տեղէ մը անցանք լեռները եւ առինք մեզ ուրի մը, որ մեզ բերաւ Գեղվենի⁽³⁴⁾ գիւղը: Մեռած մարմիններ կային ամբողջ նամբու երկայնքին: Անոնցմէ ոմանք ուղղակի վրան էին ուրիին՝ այնպէ՛ս որ ձիերն ստիպուած էին զանոնք կոխոտելու: Այս այն ուղին էր, որով թղթատարը կանոնաւոր կերպով կու գար Խարբերդ, սակայն, անշուշտ, անիկա հագուադէպ կերպով կ'օգտագործուէր թուրքերէն զատ որեւէ մէկուն կողմէ: Լեռան վրայ տեղ մը իմ թուրք ընկերակիցս ցոյց տուաւ ձոր մը ուղիի կողքին եւ ըսաւ թէ այդ ձորին մէջ սպաննուեր էին քազմաքիւ հայեր՝ երկու կամ երեք հարիւր ոտք⁽³⁵⁾ հեռու այն կէտէն ուր կը կենայինք այն ատեն: Կրնայինք հոտն առնել մեռած մարմիններուն, սակայն տրուած ըլլալով որ ուշ էր ժամանակը եւ մենք արդէն իսկ տեսեր էինք քաւական մեծ թիւով [դիակ]՝ չուզեցինք նոյնիսկ դուրս գալ մեր նամբայէն այդ հեռաւորութեամբ՝ տեսնելու համար յաւելեալ որեւէ բան: Այսուհանդերձ՝ այդ վայրն այցելեցի մէկուկէս տարի ետք եւ ձորին մէջ տեսայ ոսկերտիքը հարիւրաւոր մարդերու: Լեռան եւ Գեղվենի միջեւ գտնուող դաշտերուն մէջ տեսանք այն վայրը ուր սպաննուեր էին հագարաւոր մարդեր: Անոնցմէ շատեր քաղուեր էին ծանծաղ գերեզմաններու մէջ, քայց տեսանք շատերն անոնց ոսկորներուն: Այս վայրը մօտաւորապէս լոկ տասը մղոն⁽³⁶⁾ հեռու էր Մամուրէք իւր-Ազիզէն, սակայն կ'ըսուի թէ վատարագոյն սպանդանոցներէն մէկն

է եղած ամբողջ շրջանին մէջ: Ըսուեցաւ ինծի թէ դուրս էին հանուեր
եւ նիշտ հոս [ալ] սպաննուեր քազմաթիւ այն մարդերը որոնք կանո-
նաւոր գաղթէն առաջ ձերբակալուեր էին ու քանտարկուեր Մամուրէթ-
իւլ-Ազիզէն, Խարբերդէն եւ դրացի գիւղերէն: Գեղվենքի շուրջ կա-
յին հետեւերը մեծ քանակաւայրերու, ուր ախորականներու խումբեր
կանգ էին առեր ամբան ընթացքին: Անոնցմէ ալ շատեր սպաննուեր
էին այս դաշտերուն մէջ: Տուն հասանք գիշերուան ժամը իննին մօտ
եւ զգացի թէ հիմա շա՛տ աւելի լաւ կը հասկնայի թէ ի՞նչ կը նշանա-
կէր հայերուն «տեղափոխութիւնը»: Ջգացի նաեւ թէ սխալած չէի իմ
կարգ մը տեղեկագիրներուն մէջ Մամուրէթ իւլ-Ազիզի մասին խօսե-
լով, որպէս Թուրքիոյ «Սպանդանոց նահանգը»:

Քանի մը շաքաթ ետք Ամերիկեան Հիւանդանոցի բժիշկ էթ-
ֆինսընը յայտնեց թէ կը փափաքէր հետս կատարել այս [միեւնոյն]
շրջապտոյտը: Որոշեցինք այս անգամ կատարել ամբողջական մէկ
շրջանը լինին՝ տեսնելու համար թէ ի՞նչ կրնար գտնուիլ անոր միւս
կողմը, ինչպէս նաեւ [այցելել] հոն ուր [արդէն իսկ] գտնուեր էի
ես: Հոկտեմբերի վերջերուն օր մըն ալ նամբայ ինկանք առաւօտեան
ժամը չորսի մօտ. [էջ 84] անցանք հայկական Հուլիո գիւղէն, եւ ապա
կիրնէ մը որ մեզ հասցուց լինի հարաւային ծայրամասը: Անցանք
մօտիկէն Բանի մը կմախֆներուն եւ ոսկորներուն այն մարդերուն՝
որոնք, ըստ երեւոյթին, սպաննուած կամ մեռած էին ամբան սկիզբը:
Այնուամենայնիւ՝ լինին արեւելեան կողմը գտանք մարմինները քազ-
մաթիւ հայերու, որոնք վերջերս էին սպաննուեր: Եզրակացուցինք
թէ անոնք բնակիչները պիտի ըլլային հայկական Կէօլնիւ գիւղին,
որոնք հաւանաբար փորձեր էին փախուստ տալ ոստիկան-զինուոր-
ներէն: Գիւղը հաստատուած է Կէօլնիւ լինի երկայնքին գրեթէ կէ-
սին եւ լինին վրայ միակն է, որ ունի որոշ տարածք: Անիկա կը գտնուի
գրեթէ ուղղակի կերպով հանդիպակաց կողմը իմ նախորդներուն եւ
միսինոններուն քանակատեղիին, զոր այցելած էի իմ առաջին շրջա-
գայութեանս ատեն: Երբ հասանք այս գիւղը՝ գտանք որ [հոն] մնա-
ցեր էր ո՛չ իսկ մէկ բնակիչ: Լեռած էր քացարձակ կերպով՝ քացի
Բանի մը անօթի կատուներէ որոնք կը թափառէին տուններու աւերակ-
ներուն մէջ:

... Ջգելէ ետք Կէօլնիւ գիւղը՝ գրեթէ ժամ մը քալեցինք արհիւն
վրայ, սակայն չկարողացանք շարունակել այդ նամբով, որովհետեւ
կարգ մը տեղեր ջուրը կը հասներ արհիւն վեր: Քանի մը անգամ ձիե-
րը վարեցինք ջուրին մէջէն մինչեւ որոշ հեռաւորութիւն, սակայն
այդքան խորացաւ ջուրը որ ստիպուեցանք ետ դառնալ եւ այլ նամ-
բայ փնտռել: Գտանք արահետ մը որ կը տանէր դէպի լեռ եւ հետեւե-
ցանք անոր՝ մինչեւ որ երեւութապէս անիկա հասաւ իր աւարտին:

Կէսօրէն ետքի մնացեալ մասն անցուցինք թափառելով լեռան վրայ, մեր ձիերը վեր ու վար քաշկոտելով ձորի կողքերուն վրայ որոնք գրեթէ վիհեր էին կարգ մը տեղեր, եւ փնտռելով նամբայ մը կամ արահետ մը:

Լնափի ամենէն աւելի մեկուսի ինկած տեղերէն մէկուն մէջ՝ բլուրէ մը տեսանք իրարու վրայ ինկած մեռած քանի մը հայու մարմիններու դէպ մը: Բոլորն ալ ինկեր էին ափին վրայ ու կը գտնուէին երկու կամ երեք հարիւր ոտք երկարութեան եւ հազիւ թէ այդ հեռաւորութեան քառորդին [էջ 85] չափ լայն ունեցող տարածութեան մը վրայ: Անիկա կը գտնուէր ձորակի մը ելքին, որուն երկու կողմերը շատ էին ցից եւ կ'երկարէին լինէն ներս: Չկա՛ր հոն տանող ուղի: Վար իջանք աւելի մօտէն նայելու համար անոնց՝ զարմացած թէ ի՞նչպէս կարելի էր մարդերու խումբ մը բերել այսպիսի վայր մը: Երբ մօտեցանք մարմիններուն՝ տեսանք որ անոնց բոլորն ալ կը պատկանէին կիներու եւ մանուկներու, եւ թէ անոնք սպաննուած էին բաւական վերջերս: Սուրի վերքեր նշմարեցինք անոնցմէ շատերուն վրայ: Խորհուրդ մըն է թէ անոնք ի՞նչպէս կրնային սպաննուած ըլլալ այսքան մօտ իրարու: Պէտք էր որ գոյութիւն ունենար ստուար թիւ մը ոստիկան-զինուորներու կամ քիւրտերու՝ զանոնք շրջապատելով այսպէս սպաննելու համար: Դէզին մէկ կողմը երեսն ի վար պակեր էր կիս մը, որուն պատիկին գլուխը դուրս էր ցցուեր իր մարմինին տակէն⁽³⁷⁾: Մերկ էին բոլոր մարմիններն ալ եւ անոնցմէ շատեր ցոյց կու տային հետքերը բռնութեան, գոր ոստիկան-զինուորներ ի գործ կը դնէին սպաննուած կիներէն եւ աղջիկներէն այդքա՛ն շատերուն վրայ: Դարձանք ու մագլցեցանք ափն ի վեր՝ վերսկսելու համար ուղի մը գտնելու մեր աշխատանքին: Ուշ էր ժամանակը, եւ վախցանք որ, տարուան այդ եղանակին, հետեւանքները կրնային լուրջ ըլլալ թէ՛ մեզի եւ թէ՛ ալ մեր ձիերուն համար՝ եթէ ստիպուած ըլլայինք գիշերելու լեռան վրայ: Անկէ ետք շրջեցանք ատեն մը եւս՝ նամբան աւելի եւ աւելի եւս դժուարանալով: Ո՛չ մէկ արահետ գտնելով լինին մօտ՝ մագլցեցանք մինչեւ կատարը լեռներու շղթային, որ կ'երկարէր անոր⁽³⁸⁾ այս կողմին վրայ, եւ ի վերջոյ հասանք այն նամբուն գոր կը փնտռէինք: Գրեթէ մութ էր եւ հետզհետէ կը ցրտէր: Հեծանք մեր ձիերուն եւ անապարեցինք, որովհետեւ տակաւին բաւական հեռաւորութիւն մը կար մինչեւ այն խանը ուր կը ծրագրէինք անցընել գիշերը: Ճամբուն վրայ անցանք քրտական քանի մը գիւղ եւ մեռած քաղմաթիւ մարմիններու մօտէն, որոնցմէ ոմանք գրեթէ գիւղերուն իսկ մէջն էին: Երեկոյեան աղջամուղջին՝ երբ ձիով կ'անցնէինք այս մեռած մարմիններուն բովէն եւ նամբուն վրայ հանդիպեցանք քիւրտերու՝ որոնց հսկայական [ու] վայրագ

գամբոնը գիւղերէն խուժեցին դուրս եւ գրեթէ ցատկեցին մեր ձիերուն վրայ՝ մեր ձեռքերը պահեցին վրան մեր ատրճանակներուն եւ արագացուցին մեր քայլերը:

Մթննալէն բաւական ետք էր որ հասանք Տիգրանակերտի ճամբան եւ ի վերջոյ՝ Գագիմ Խանը, որ տեղաւորուած էր լիճին հիւսիսային ծայրամասին վրայ: Գրեթէ սպառած էին մեր տաժանելի ձիավարութենէն, որ [շարունակուել էր] այդ առաւօտեան ժամը երեքէն ի վեր: Մեր ընթրիքը դրինք խանին տանիքը եւ կերակրեցին: Ապա մենք զմեզ փաթեցինք [այն] ծածկոյթներով գորտնէ կրքեր էր մեզմէ իւրաքանչիւրը եւ որտեղ մեր միակ անկողիներն էին, [եւ] քնանալու համար երկարեցանք տանիքին վրայ: Սարսափելի կերպով ցուրտ էր գիշերը, սակայն հակառակ մեր խեղճ կերպով պաշտպանուած ըլլալուն անոր դէմ՝ նախընտրեցինք քնանալ այսպէս՝ քան թէ խայթուիլ բժաւոր տեղի փոխադրող ոչիւններէն, որտեղ, գրեթէ վստահ էինք, կը գտնուէին վարի սենեակներուն մէջ:

Յաջորդ առաւօտ արթնցանք տխուր եւ [մարմնովին] կարծրացած, ու շարունակեցինք մեր ուղեւորութիւնը լիճին շուրջ: Կարն ատեն մը հետեւեցանք մայր ճամբուն՝ անցնելով կարգ մը մեռած մարմիններու մօտիկէն: Ապա ձգեցինք ճամբան եւ առինք [էջ 86] արահետ մը որ կ'երկարէր լիճի երկայնքին: Այս այն ճամբան էր ուրկէ մամակները կը հասնէին Մամուրէթ իւլ-Ազիզ: Ամէն կողմ կային մարմիններ, կմախքներ եւ ոսկերտախի: Ոսկորներէն շատեր սպիտակեր էին եւ չորցեր, եւ ցոյց կու տային թէ հոն էին ամբար սկիզբէն ի վեր:

Մօտ երկու ժամ ետք հասանք մեծ ձոր մը՝ ո'չ շատ հեռու այն կէտէն, ուր ձգեր էի լիճը իմ նախորդ ուղեւորութեանս ատեն ու վերադարձեր տուն: Որեւէ տեղ եւ որեւէ պտոյտի ատեն իմ տեսածներէս չա'տ աւելի [թիւով] մեռած մարմիններ կային հոս: Հաշուեցինք որ այդ ձորին մէջ կային երկու հազարէն ոչ պակաս: Անոնցմէ շատեր ուղղակի ծայրն էին լիճին եւ անոնց գլուխները կ'երեւէին աւազէն վեր՝ ինչպէս որ բացատրած եմ այլ տեղեր: Մեր տեսածներէն մէկը կը պատկանէր կնոջ մը, որուն բովիկը կար մարմինը իր մանկիկին որ չէր կրնար ըլլալ քանի մը օրէ աւելի մեծ: Ընդարձակ էր ձորը եւ մարմինները տարածուած՝ ամէն կողմ: Անոնցմէ շատեր թաղուած էին, սակայն անկէ⁽³⁹⁾ ի վեր [չուրը] իշած էր այն աւազը որ կը ծածկէր գտնոնք ու ձգած կիսով մը տեսանելի: Կային նաեւ մնացուկները բանակավայրի կրակներուն եւ գաղթականներու անձնական իրերուն գորս ունէին, — կոտորած քանի մը սափոր, հողէ քանի մը աման, տախտակեայ քանի մը դգալ, եւ բաւական մեծ թիւով անցագիր: Վերջիններուն քննութիւնը ցոյց տուաւ որ անոնք⁽⁴⁰⁾ կարինէն էին եւ այլ

վայրերէ: Բացի պատահական գուլպայէ մը՝ կար ո՛չ մէկ զգեստ եւ արժէքաւոր ո՛չ մէկ բան: Անշուշտ ոստիկան-զինուորներն ու քիւրտերն առեր էին արժէք ներկայացնող ո՛րեւէ բան: Մերկ էին բոլոր մարմիններն ալ՝ շատ հաւանաբար իրենց սպանութեանն առաջ իսկ ստիպուած ըլլալով հանելու իրենց զգեստները: Այս ձորն այցելեցի կրկին անգամ 1917-ի Մարտին ու գտայ որ հարիւրաւոր մարմիններ կային անոր վերի մասին մէջ ալ, գորոնք չէի տեսած նախապէս: Հաւանաբար թաղուած էին, բայց ջուրը տարած էր հողը: Ամբողջ ձորը որ քանի մը արտավար⁽⁴¹⁾ էր՝ մեծ գերեզմանատուն մըն էր: Կ'իմանամ թէ այս մէկն առաջին այն վայրերէն էր, ուր կը բերուէին հայերն ու կը ջարդուէին: Անոնց մարմիններուն եւ ոսկորներուն տեսէն եզրակացուցի թէ անոնք մաս առ մաս էին բերուեր հոն, [եւ] իւրաքանչիւր խումբի մէջ գտնուողներ սպանուեր ու թաղուեր՝ յաջորդներուն հասնելէն առաջ: Այս ձորը ամենէն դիւրամատչելին էր լինին վրայ, սակայն կային գաղթականներու այդքա՛ն խումբեր այդ ամառ որ կարելի չէր զայն գործածել բոլորին համար: Ուստի այլ խումբեր տարուեցան ա՛յլ ձորեր, որպէսզի գոհերը չգիտնային նակատագիրն անոնց որոնք նախորդեր էին գիրենք: Մեծ թիւով սպանուեր էին շուրջը բլուրի մըն ալ որ ծանօթ էր Շապկահան անունով եւ կը գտնուէր այս ձորէն քանի մը մղոն⁽⁴⁵⁾ ետ՝ քրտական գիւղի մը մօտ: Թուրքեր եւ ջարդուողներէն փախուստ տուողներ պատմեցին ինծի թէ ի՞նչ պատահեցաւ հոն, սակայն անշուշտ անկարող էի այցելելու բոլոր ձորերն այս շրջանին:

Մենք շարունակեցինք մեր շրջագայութիւնը լինին շուրջ դէպի [այն] բանակավայրը [էջ 87] գոր յիշեցի նախապէս՝ կրկին անցնելով այն ձորերէն որոնց մասին խօսուեցաւ արդէն: Մինչ այդ, [սակայն], մարմիններէն ոմանք հրկիզուեր էին՝ հաւանաբար ոսկիի փնտտումի համար: Հաշուարկեցինք թէ լինին շուրջ մեր շրջապտոյտին ընթացքին, եւ իրողապէս քանչորս ժամուան [տեսողութեան], տեսնելով մնացուկները տասը հազարէ ոչ-նուազ հայերու, որոնք ջարդուեր էին Կէօյնիւի լինին բոլորտիքը: Անշուշտ այս մէկը մօտաւոր [թիւ] մըն է՝ տրուած ըլլալով որ անոնցմէ ոմանք ոսկորներն էին անո՛նց միայն, որոնք կորսուեր էին քանի մը ամիս առաջ, եւ որոնցմէ միսն անհետացեր էր ամբողջութեամբ, մինչ այլ պարագաներու՝ այդքա՛ն թարմ էին դիակները որ բոլորն ալ ուռած էին եւ անոնց գարշահոտը ցոյց կու տար թէ անոնք սպանուեր էին լո՛կ քանի մը օր առաջ: Այսուհանդերձ՝ վստահ եմ որ [ջարդուածներն] աւելի էին քան թէ [տրուած] այս թիւէն նուազ, եւ հաւանական է որ մեր տեսած մնացորդները միայն փոքր մէկ կտորակն էին այդ շրջանի մէջ [ջարդուածներու] ընդհանուր թիւին: Իրականութեան մէջ՝ դէպի Կէօյնիւի

լին [կատարած] յետագայ իմ շրջապտոյտներուս ընթացքին գրեթէ մի'շտ ալ գտայ անհամար կմախֆներ եւ ոսկորներ այն նո'ր վայրերուն մէջ գորոնք այցելեցի, [եւ այս մէկը՝] նո'յնիսկ Խարրերդը ձգելէս քանի մը շաբաթ առաջ:

Քիչ վայրեր կրնային աւելի լաւ յարմարիլ թուրքերու գազանային նպատակներուն՝ հայ ժողովուրդը բնաջնջելու իրենց ծրագրին մէջ՝ քան Ասիական Թուրքիոյ ներսերը [գտնուող] այս խաղաղ լինն իր խորխորատային փերով եւ գրպանանման ձորերով, շրջապատուած՝ վայրագ քիւրտերով, [եւ] հեռու՝ քաղաքակիրթ մարդու տեսողութենէն: Թերեւս ա'յս էր պատճառը թէ ինչո՞ւ հեռուոր գաւառներէն բազմաթիւ գաղթականներ ապահով կերպով կը բերուէին մինչեւ Մամուրէթ իւլ-Ազիզ, եւ ապա կը ջարդուէին Թուրքիոյ «Սպանդանոց նահանգ»ին մէջ: 1915-ի ամբան ի'նչ որ պատահեցաւ գեղեցիկ Կէօյնիւֆ լինին շուրջ՝ գրեթէ աներեւակայելի է: Հագարաւոր եւ հագարաւոր հայեր, մեծ մասով անմեղ եւ անօգնական կիներ եւ մանուկներ, մորթուեցան անոր փերուն վրայ եւ բարբարոսաբար յօշոտուեցան: Քաղաքակիրթ երկիր մը բնակողի մը համար դժուար է հաւատալ թէ կարելի՛ են այսպիսի բաներ, այսուհանդերձ, ինչպէս կ'ըսէ Լորտ Պրայս՝ «քանք գորոնք հագուադէպ կերպով կը գտնենք հաւատալի՛ շա'տ քիչ զարմանք կ'առքեն Թուրքիոյ մէջ»:

Այս երկու պտոյտները գորոնք 1915-ի աշնան կատարեցի դէպի Կէօյնիւֆ լինը՝ եկան հաստատելու շատերը այս ուղղութեամբ տարուած հայերու նակատագիրին մասին [շրջող] տարածայնութիւններուն, եւ ցոյց տուին մեզի թէ անհիմն չէին մեր վայրերը տարագրուածներուն մասին... [էջ 87]:

ԼԵՍԼԻ Ա. ՏԷՅՎԻՍ

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Այս վերնագիրը կը վերցուի Մամուրէթ իւլ-Ազիզի ամերիկեան հիւպատոս Լեսլի Ա. Տէյվիսի 9 Փետրուար 1918 թուակիր, Նիւ Եորք նահանգի ձեֆքըքըն քաղաքը գիրի առնուած եւ Խարրերդի շրջանի տեղահանութեան եւ ջարդերուն վերաբերող համապարփակ եւ բնդարձակ տեղեկագիրէն. տես՝ Davis, pp. 77, 83, եւ 87: Իր կարգին՝ Խարրերդի նահանգին համար օգտագործուող այս ստորագումը առաջին անգամ օգտագործուած կը գտնենք Պոլսոյ ամերիկեան դեսպան Հենրի

Մորկընթոյի յղուած Տէյվիսի 7 Սեպտեմբեր եւ 30 Դեկտեմբեր 1915-ի զոյգ հե-
ռագրներուն մէջ: Տես՝ Նոյն, էջ 175 եւ 181: Հոս տրուած հատուածը կը վեր-
ցուի Տէյվիսի 9 Փետրուար 1918-ի տեղեկագիրէն, որ կը կրէ

Report of Leslie A. Davis, American Consul,
Formerly at Harput, Turkey,

on the Work of the American Consulate at Harput,
since the Beginning of the Present War

This Report is Prepared at the Request of Mr. Wilbur J. Carr,
Director of the Consular Service

- վերնագիրը, տրուած՝ հիւպատոսին իսկ կողմէ: Տեղեկագիրին բնագիրը կը
գտնուի ամերիկեան National Archives, Records of the Department of State, R. G. 59 File,
867 բուստանարին ներքեւ: Քառակուսի փակագիծերու մէջ կը տրուին հատուա-
ծին էջերը եւ մեր կողմէ յայտնումներ՝ վասն յստակացումի:
2. Բազմաշէն. հայկական աղբիւրները գայն կը ճանչնան մասն Պիզմշէն եւ Բզմը-
շէն անուններով: Հետաքրքրական է որ Լիբանանի Ամիում քաղաքի հիւսիսը
գտնուող Պշմզգիներ, որ կը բուսի ունեւայ որոշ աղբիւր մը Բազմաշէնի հետ՝ տա-
կաւին չէ ենթարկուած որեւէ ուսումնասիրութեան՝ գտնելու համար այն կայը,
որ գուցէ գոյութիւն ունի երկուսին միջեւ:
 3. Խուլաբէտոյ կամ Խուլագեղ:
 4. Ըսել կ'ուզուի՝ քրիստոնեայ հայութիւնը: Պերլինի վեհաժողովէն ետքի գրաքե-
րոյոր փաստաթուղթերն ալ, որոնք որեւէ ձեւով աղբիւր մը ունին Արեւմտեան
Հայաստանի եւ արեւմտահայութեան հետ՝ կամաւոր կերպով կը մտնան հայ ժո-
ղովուրդը, ու գայն կը կոչեն քրիստոնեայ ժողովուրդ, քրիստոնեայ բնակիչ,
բնիկ ժողովուրդ, եւ այլ վերադիրներով:
 5. Խարբուրդ Սերայ:
 6. Ըստ Նագիեանի՝ բուն Մեզիքէ քաղաքը:
 7. Հայ եւ օտար պատմագրութեան մէջ ծանօթ է մասն Քեսիբիկ, Կեսարիկ եւ Չեսա-
րիչիա անուններով:
 8. Հայկական աղբիւրները գայն կը յիշեն մասն Սիրսիւր, Սիրսիւրի եւ Սորոնք
անուններով:
 9. Կը յիշուի մասն որպէս Դատեմ եւ Դատիմ:
 10. Խուլլու. ծանօթ էր մասն որպէս Թեկատ եւ Թլկատին:
 11. Կը նշուի մասն որպէս Շենթիլ:
 12. Կարմրի կամ Կարմրիկ:
 13. Սկզբնաղբիւրները գայն կու տան մասն Փարջանջ որպէս:
 14. Հայկական աղբիւրներու մէջ մասն Նրքմնիկ կամ Նրգմնիկ:
 15. Նասի՝ Հնճոր:
 16. Հին Ագարակ:
 17. Նասի Քէօրփէ, որ գուցէ աղաւաղումն է քրքերէն Քէօփրի՝ կամուրջ բառին:
 18. Յակոբ Մեզիքէ:
 19. Հայկական աղբիւրները գայն կը ճանչնան մասն Հարսիկ եւ Հարեսիկ անուննե-
րով:
 20. Կակնարկէ Պոլսոյ Ամերիկեան Դեսպանութեան:
 21. Տէյվիսի շրջագայութիւններուն ընթացքին, ամոր ընկերակիցը միշտ ալ եղաւ
բուրք մը՝ ո՛չ միայն լեզուական՝ այլ մանաւանդ ազատական նկատումներով:
 22. Այժմ՝ Խազար Կէօլ: Հայկական աղբիւրները գայն կը ճանչնան որպէս Մով: Կը
գտնուի Խարբերդէն մօտ 35 քմ. դէպի հարաւ-արեւելք եւ ունի 3.5 քմ. լայնք
եւ 18 քմ. երկարութիւն՝ մօտ 65 քմ² մակերեսով: Զուրը աղի է:

23. Ըսել կ'ուզուի՝ դիակներու:
24. Այսինքն՝ տարագրուող հայեր: Ըստ ինքնուրույն վկայութեան՝ տարագրութեան իր դե-
գերումներուն ընթացքին, մանաւանդ սկզբնական շրջանին երբ բազմաթիւ հայեր
տակաւիմ ունէին իւր իւր համար, կը կլլէին գայն պահել կարենալու համար,
իսկ իւրտեր յամախ ողջամբ փորը կը նեղէին հայ տարագիրներուն՝ ստամոք-
սէն կամ աղիքներէն դուրս հանելու համար իւր իւր կտոր դրամ:
25. Կ'ակնարկուի բանակումի եկող ամերիկացի միսիոնարներուն եւ Տէյվիսին մա-
խորդող հիւպատոսին եւ անոր ընտանիքին:
26. Գլխաւոր եւ սեւ ծոպով կարմիր գլխարկ, զոր բազմաբանակներուն վերնախաւը
կ'օգտագործէր Օսմանեան կայսրութեան մէջ: Ինչպէս բազմաթիւ բաներ այլազան
ժողովուրդներէ՝ թուրքն այս մէկն ալ առեր էր եւ իւրացուցեր մարտցիներէն:
27. Մօտ վեց մեքր:
28. Տէյվիսն իր տեղեկագիրին մէջ կ'օգտագործէ «մարմին» կամ «մեռած մարմին»
տարազը «գիակ»ի փոխան: Մեր թարգմանութեան մէջ պահեցինք անփոփոխ:
29. Փաստարուողքն ունի «մեծ» բառը, մենք թարգմանեցինք՝ «ծանր»:
30. Ըսել կ'ուզուի՝ մուտքի յայնքին:
31. Տէյվիս կ'ակնարկէ Խարրերդէն անցած կարնեցիներու եւ երզնկացիներու կարա-
ւանին:
32. Այսինքն՝ սպաննուած հայերուն:
33. Իրեքէ ամբողջ Թուրքիոյ տարածքին ի գործ դրուող արարք մըն էր այս մէկը,
այսինքն՝ սուրի մէկ հարուածով հերձելէ ետք կիներուն իզափողը մինչեւ անոնց
արգանդը՝ կատարել փնտտումը դէպի ներս գետնիցուած ոսկիին կամ մետաղեայ
այլ առարկային:
34. Գեղվանք:
35. 60-75 մեքր:
36. 18.5 ֆիլոմեքր:
37. Տէյվիս կ'ակնարկէ անաւարտ ծննդաբերութեան մը:
38. Այսինքն՝ լինին:
39. Այսինքն՝ մեռելներուն թաղուելէն ի վեր:
40. Այսինքն՝ անոնց սպաննուած տերերը:
41. Մակեդոնի անգլիական չափ մը, որ կը հաւասարի 4047 ֆառ. մեքրի:
42. Մէկ մղոմը կը հաւասարի 1.6093 ֆիլոմեքրի:

Լ. Ա. Տ.

HARPUR, THE SLAUGHTERHOUSE OF THE OTTOMAN EMPIRE

(SUMMARY)

LEVON VARTAN

Though written to be a book review, the article does primarily deal with the massacres of the Armenians in the Harput province, which Leslie Davis, the American Consul at Harput, called the «Slaughterhouse Province». Making abundant use of the American, German, French, British and Ottoman official documents, as well as the reports and diaries of some Danish, German, Swiss and French missionaries, Red Cross workers and contemporary eye witnesses to the massacres, the author has tried to reconstitute the picture of the holocaust of Harput province, as well as its beginning and advance. To make things clearer and the bloody picture more conspicuous, a small section of the American Consul's report is translated into Armenian too. This section just follows the first section which intends to review Leslie Davis's annotated and published report by Suzan K. Blair.